

891.54(08)

Ա-73

ՀՊԱՏԱՐԱՆԻ ԹԵՐԵՅ Ա. ԵՎԱՐԵԱՆ ԳՐԱՄԱՆ

Հ. Ա. Զ. ԱՍԱՏՈՒՐ

# ԹԱՂԳԱՐԱԿ

ՀԱՏԵԱՏԻ ՀԱՏԻԱԾՆԵՐՈՒ

ԱՐՁԱԿ ԵԿ ԱՏԱԼԱԿԻՐ

ՏՈՐԻԱԿ ԳՈՍԵՐԱԿԱՐ

Գ. ՏԱՐԱՔԻՔԻԿԻ

Օնոմատոպիա Խորհութեական և գույքական

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՇԴՅԱՆ

ZUPEN-EL-ZUR-EL-AHEDJIAN

1914

H. O. ACHDJIAN

LIBRAIRE et NEGOCE  
de TIMBRES POSTAUX

HABEI EL

ԳՐԱՎԱԶԱՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ա. Ե. Զ Ե Ղ Ե Ս Ո Ն

Կ. Պ Ո Լ Ի Ս

ՄԻԱԿ ԿԱՇՈՒԱՏԵՐ  
ԸՆԹԱՑԻՔ Թ. Ա. ՊՈՆՏՈՎԻ (Յ. Բ. ԴԱՎԻԴՅԱՆ, Ա. ԱՌԱԳԵԼԻՆԻ,  
Ա. Ա. ԱՌԱԳԵԼԻՆԻ, Ա. Ա. ԱՌԱԳԵԼԻՆԻ, Ա. Ա. ԱՌԱԳԵԼԻՆԻ)

39208 154  
55557

ԳՐԱՎՈՐ Ա. Յ Ա Զ Ի Ճ Ե Ս Ո Ն  
Սուլթան Համամ, Պազլրենըլար 11

Կ. Պ Ո Լ Ի Ս

Librairie A. YAZIDJIAN

11, Sultan Hamam, Bakrdjilar, CONSTANTINOPLE

1971

ԱՄՈՒԴՎՈԾ 1958

09



891.54(08)

Հ. ԵՒ Զ. ԱՎԱՏՈՒՔ

44-73

# ԹԱԴԳԱՐԱՆ

# ՀԱՏԵՎՄԱՆ ՀԱՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՁԱԿ ԵՒ ՌՏԱՆԱՀՈՐ

ՏԱՐԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

## Ուսումնական խորհուրդին վաւերացուած

ԵՐԵՐԴ · ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԱԾ



1914

## ՅԱՐԱՀԱՐԱՆ

ԹԱՆԳԱՐԾՆԻՑ այս հատորը յատկացած է Տարրական Դասընթացին : Ասոր մեզ ամփոփած ենք պատմուածքներ, իրազիտական ծանօթութիւններ եւ մանկական ուսանաւորներ, ամենն ալ դիւրին եւ զարգ, յատկապէս այս դասագրքին համար բարզմանուած կամ հետեւողութեամբ պատրաստուած մեր կողմէ :

Ընթերցանութեան դասին կարեւորութիւնը բացառած էնք արդէն այն յառաջաբաններուն մեջ զորս կը պարունակէն ԹԱՆԳԱՐԱՆին Միջին Դասընթացին եւ Բարձրագոյն Դասընթացին յատկացած հասորները։ Հոս կ'ուղենք յիշեցնել մասնաւորապէս թէ ուսուցիչը Տարրական Դասընթացին աշակերտներուն արտասանութեան շա's ուսադիր ըլլալու է, նոյնպէս յատուկ խնամքով բացառելու է իւրաքանչիւր նախադասութիւն, եւ ձգելու չէ ո եւ է գաղափար որ անհասկանալի մնայ անոնց։ Այս տեսակետով կրնան օգտակար ըստ հատուածներուն տակ նշանակուած հարցումները, քիչւ ուսուցիչը պէտք է զիտնալ թէ անոնք ամբողջ նիւթը չեն ընդգրկեր, եւ թէ ինչ պէտք է նորանոր հարցումներ մասն եւ ուղղէ աշակերտներուն, խօսակցելով անոնց հետ։

Միեւնոյն դիտովորքիւնը՝ նաև բացարուած բառերուն համար: Ուսուցիչը խւախանչիւր աշակերտի ըմբռուման եւ զարգացման աստիճանին համեմատ կրնայ մեկնել բառերը, որոնցմէ մեկ մասին իմաստները միայն նշանակած ենք այս գրքին մեջ:

340023088



39208

55581



154

Հոգ տարած ենք նաև այս հատորին նիւթերուն հետ առնչութիւն ունեցող պատկերներ պատրաստել տալու, որովհետեւ պատկերները շատ բելադրիչ են, եւ մանաւանդ Տարրական Դասընթացին աշակերտներուն համար մեծապէս կը դիւրացնեն ուսուցչին զործը, երկ զիտնայ օգուտ ժաղի անոնցմէ. իւրախանչիւր պատկեր ոչ միայն հասուածներու լրւսաբանութեան տեսակետով կարեւոր է, այլ եւ կրնայ խօսակցութեան բազմարիւ նիւթեր հայրայիշել:

Պատմուածներուն եւ ոտանաւորներուն տակ,—որոնց մեջ զգուշացած ենք վերացական զաղափարներէ, եւ զանացած ենք դիւրմբոնելի իրողութիւններ միայն պատկերացնել, — ի վեր հանած ենք այն բարոյական նշմարտութիւնները որոնի դուրս կու զան անոնցմէ: Պատմուածներէ եւ առակներէ արտացոլացող բարոյական սկզբունքները շատ աւելի խորունկ տպաւորութիւն կը բողուն մատղաւ միտերու վրայ խան անջատ կերպով աւանդուած բարոյական դասերը:

Կը կարծենի ուրեմն որ այս դասագիրքը այդ վերջին տեսակետով ալ կոչուած է օգտակար ըլլալ մեր նախակրթարաններու ուսանող մանկութեան:

Հ. ԵՐ Զ. Ա.Ս.Ա.Ց.Ի.Ր.



# ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱ.ՏԸՆՏԻՐ ՀԱ.ՏՈՒՄ.ԾՆԵՐՈՒ



Ձութակը կ'առ.նէր ու կ'ոկտէր նուագէլ (Տե՛ս էջ 8)

## I. ԶՈՒԹԱԿԸ

Զաւէնին հայրը ջութակ(1) մը ունէր, և երբ ուղէր իր տղուն ուրախութիւն պատճառել, ջութակը կ'առնէր ու կ'սկսէր նուագել այն երգերը զոր Զաւէն մանկապարաէզին մէջ սորված էր. Կեցցե՛ շուր, Թոյնիկն ահա՛, Ծիծեռնակ, ևլի:

Եւ, Զաւէն կ'երգէր, ու հայրիկը անուշ անուշ կ'ընկերանար անոր մեղմիկ(2) ձայնին՝ ջութակին վրայ: Ջութակ զարնելը ամենեւին դժուար բան մը չէր երեւար փոքրիկ տղուն:

Բաւական էր որ հայրը ջութակը ծնօտին(3) և կուրծքին մէջտեղը առնէր, ձախ ձեռքով ջութակին կոթը բռնէր, մատերովը թելերուն դըպչէր, յետոյ աջ ձեռքովն ալ աղեղը(4) պալացնէր լարերուն(5) վրայ:

Ջութակը կը նուագէր այն ատեն ինչ որ ուղէիր: Գոնէ Զաւէն այսպէս կը կարծէր:

Ուստի, օր մը փա-

փաքեցաւ որ ինք ալ նուագէ:

Հայրը հաւանեցաւ: Տղան ջանաց ճիշդ հօրը ըրածին պէս, ջութակը կուրծքին վրայ գետեղել(6), ու սկսաւ աղեղը շարժել լարերուն վրայ:

Բայց ի՞նչ անախորժ(7) ձայն մը լսուեցաւ: Փոխանակ իր փափաքած անուշ եղանակը նուագելու, ջութակը



սկսաւ ծոնչել, խոկալ, ճղալ, ու այնքան անհաճոյ(8) ճիշեր հանեց, որ տղան սարսափեցաւ:

Ու նուագարանը հօրը տալով հարցուց.

— Ի՞նչ ընելու է որ ջութակը աղուոր եղանակներ նուագէ:

— Տղա՛ս, պատասխանեց հայրը, նախ սորվելու է, և սորվելու համար՝ աշխատելու է:

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ. — Ու եւ կ զործի մէջ յաջողելու համար, նախ պէտք է աշխատի եւ սորվիլ:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Զաւրակ. — Թեկերով նուագարան մը (Քեյսան):

(2) ՄԵՂՄԻԿ. — Կամաց և անուշ:

(3) ԴՅՈՍ. — Թերնին տակի դուրս ցցուած մասը:

(4) Ա.Լ.Ի. — Վրան բարակ թեկերով ցպիկ մը որով ջութակ կը զարնեն:

(5) ԼԱՐ. — ԹԵԼ:

(6) ԶԵՏԵՂԵԼ. — ԴԱԼ:

(7) Ա.ՅԱ.ԽՈՐ. — ԶՈՒՐԱԿԵԼԲ:

(8) Ա.ՅԻ.ԽՈՐ. — ԶԻԱՆՈՒԵԼԲ:

ՃԱՐՅՈՒՄՆԵՐ. — Զաւէնին հայրը իր տղուն ուրախութիւն պատճառելու համար ի՞նչ կ'ընէր: — Ի՞նչ երգեր կը նուագէր: — Գիտէ՞ր կեցցե՛ շուր երգը: — Զաւէն ի՞նչ կ'ընէր: — Հայրը ի՞նչ պէտք կը բռնէր նուագարանը: — Զաւէն օր մը ի՞նչ փափաքեցաւ: — Զաւէն յաջողեցա՞ւ երգ մը նուագել: — Ի՞նչո՞ւ յաջողեցաւ: — Յաջողելու համար ի՞նչ պէտք է:

## 2. ՏԱՍԸ ԳՈՐԾԱԿԱՌՆԵՐԸ

Մէկը կար մէկը չկար, սիրուն աղջիկ մը կար. առունը Շողակ էր, և միո մինակ ստիպուած էր կառավարել մնձ ագարակ<sup>(1)</sup> մը:

«Եթէ արեւէն աւելի արագ և հովէն աւելի թեթեւաշարժ բլազի, նորէն չպիտի կարենայի այս տանը բոլոր գործերուն հասնիլ,» գոչեց օր մը Շողակ:

Եւ յուսահատ՝ նստած տեղը մնաց, թեւերը ծալլած, մատերը անշարժ:

Այդ միջոցին պառաւ կին մը անցաւ իր մօտէն զաւազանի մը կոթնած:

— Գանգատներդ լսեցի, ըսաւ Շողակին, և տասը փոքրիկ գործաւորներ բերի քեղի որոնք բոլոր հրամաններդ պիտի կատարեն:

— Ուր են, ազագակեց<sup>(2)</sup> գեռատի<sup>(3)</sup> աղջիկը:

— Հիմայ կը տեսնես:

Պառաւը, որ պարփկ<sup>(4)</sup> մըն էր, իր վերարկուն կէս մը բացաւ, և դուրս հանեց տասը հաս թղուկ<sup>(5)</sup>՝ անհաւասար մնծութեամբ:

Երկու հատը կարճ՝ բայց հասա էին:

— Ասոնք ըսաւ ամէնէն ուժովներն են, ամէն գործիդ պիտի օգնեն: Քովինները աւելի բարձրահասակ են, և շատ ձարտարութեամբ կը քաշեն ասեղը զոր իրենց եղբայրները, զլուխնին մատնոց մը անցուցած, կերպասին մէջ կը խոթեն պէտք եղած ատեն. և սա միւսներն ալ որ աւելի պատիկ են շատ գործերու կրնան մասնակցիլ: Հիմայ նայէ:

Տասը փոքրիկ թղուկները գործի սկսան: Ամէնէն

կոշտ և ամէնէն փափուկ աշխատութիւնները հետզհետէ կատարեցին:

**Շողակ սքամչացած<sup>(6)</sup> գոչեց.**

— Ո՞հ, Տիկին, ատոնք փոխ տուէ՛ք ինձի:

— Կը նուիրեմ քեղի ասոնք, ըսաւ պարիկը, կը նուիրեմ, և որպէս զի կարենաս ամէն աեղ հետզ տանիկի, ասաը մատերուդ մէջ պիտի զնեմ զանոնք: Երբեք մի՛ թողուր որ պարապ կենան, և բոլոր գործերդ պիտի տեսնեն:

**Շողակ պարիկին խրատին հետեւցաւ, և ագարակը յաջող գնաց իր վարչութեան<sup>(7)</sup> տակ:**

Այս պատմութիւնը հասկցաք, այնպէս չէ, ամէնքդ ալ որ տասնական մատ ունիք:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Աշխատութեամբ մարդ ուարութեան կը յադրէ:**

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Ազգարակ.** — Մեծ տուն մը պարտէզով շրջապատուած, ուր կենդանիներ կը մեծցնեն:

(2) **Աղաղակել.** — Պոռալ:

(3) **Թեռատի.** — Երիտասարդ:


(4) **Պարփկ.** — Բարփ էակ մը որ իրապէս չկայ (ՔԵՐԵ):

(5) **Թօզուկ.** — Շատ պղտիկ մարդ:

(6) **Միանչացած.** — Հիացած:

(7) **Վարչութիւն.** — Կառավարութիւն:

**ՃԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Շողակ ինչ ընելու ստիպուած էր: — Ազարակին մէջ ինչ կենդանիներ կը պահեն: — Օր մը ի՞նչ ըսաւ Շողակ: — Այն ատեն ի՞նչ պատահնեցաւ: — Պարփկը ի՞նչ ըսաւ անոր: — Պարփկը ի՞նչ հանեց վերարկուին մէջէն: — Ի՞նչ ըրին թզուկները: — Շողակ ի՞նչ ըսաւ անոնց աշխատիլ տեսնելով: — Պարփկը մէր զրաւ զանոնք: — Ի՞նչ հասկցաք այս պատմութենէն: — Գիտէ՛ք ձեր մատերէն ամէն մէկին անունները:



### 3. ԻՐԱԿՈՒՆՔԸ ԶՈՐԱԿՈՐԻՆՆ Է

- Ես ինը տարու եմ, Արան՝ երեք  
Զի կրնար հասնիլ ան ինձի՝ երեք.  
Իրաւունք չունիմ միթէ իր ձեռքէն  
Գիրքը առնելու, քանի որ իրմէն  
Աւելի ուժով ու մեծ եմ արգէն:
- Անչուշտ, ըստ հայրն անոր Ժափաղէմ<sup>(1)</sup>,  
Բայց նախ թո՛ղ որ ես քու զիրքըդ առնեմ,
- Ախ, ինչո՞ւ, հայրի՛կ, իմ զիրքըս կ'առնես.
- Վասն զի քեզմէ շատ ուժով եմ ես:

**ԲԱՐՈՍԿԱՆ.** — Ձեզիկ տկարներուն վրայ բռնութիւն  
մի՛ բանեցնեֆ. ձեզիկ ուժովներն ալ միեւնոյն բանը կ'ը-  
նեն ձեզի:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Փայտաղէմ. — Խնդում երեսով:

**ՀԱՅՈՒՄՆԵՐ.** — Ինը տարու տղայ մը ի՞նչ կ'ըսէր իր հօրը:—  
Հայրը ի՞նչ պատասխանեց:— Երբ տղան պատմաւը հարցուց, հայրը  
լի՞նչ ըսաւ: — Հայրը իրաւունք տուեր էր տղուն ըրածին:



### 4. ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՋԻՆ

Արտաշէս Առաջին՝ Հայոց ամէնէն քաջ և պատե-  
րազմասէր թագաւորներէն մէկն էր: Բայց այնչափ հպարտ

և փառասէր էր որ կ'ուզէր իր շուրջը գտնուած բոլոր  
ազգերուն վրայ տիրել և ամէնէն առաջինը ըլլալ :

Իրօք ալ յաջողեցաւ : Պարսից թագաւորը որ իրմէ  
վեր էր, ստիպուեցաւ սնոր իշխանութեան ենթար-  
կուիլ<sup>(1)</sup> :

Բայց միշտ գոհ չէր իր ունեցածէն, և նոր երկիր-  
ներու տիրել կ'ուզէր . ուստի արեւելքէն և հիւսիսէն շատ  
զօրք հաւաքեց և դէպի արեւմուտք քալեց մեծ բա-  
նակով :

Ուրկէ որ անցնէր, ուր որ գիշեր մը կենար, կը հրա-  
մայէր իր զօրքերուն որ մէյ մէկ քար զիզեն<sup>(2)</sup>, և այդ  
քարերով ահազին բլուրներ<sup>(3)</sup> կը ձեւանային :

Երբ իր զօրքերը գետէ մը ջուր խմէին, գետը կը  
նուազէր<sup>(4)</sup> :

Պատերազմի ատեն, իր զօրքերը երբոր նետ<sup>(5)</sup> արձա-  
կէին<sup>(6)</sup>, արեւ կը խափանէր<sup>(7)</sup>, և լուսաւոր ցորեկը՝ մութ  
գիշեր կը դառնար :

Ու այնքան շատ էին, այնքան շատ իր զինուորները  
որ կարելի չէր զանոնք համրել :

Այսպէս բազմութեամբ Արտաշէս արեւմուտք ան-  
ցաւ : Այն ատեն, Հայերը կուապաշտ էին, և Հայոց թա-  
գաւորը իր նուաճած<sup>(8)</sup> ժողովուրդներուն ուկի կուռքերը  
կը ժողվէր Հայաստան կը զրկէր :

Ուր որ գնաց, կործանեց, վլյուց, ու հարստութիւն-  
ներ գրաւեց<sup>(9)</sup> . բայց եկաւ ժամանակ մը որ իր զօրքերը  
իրեն դէմ ելան, ու սկսան իրարու հետ ալ կուռիլ : Ար-  
տաշէս փախաւ, սակայն ճամբան բռնուեցաւ իր զինուոր-  
ներէն և սպաննուեցաւ :

Այս մեծ աշխարհակալը<sup>(10)</sup> մեռած ատենը ըստ . «Ա-  
ւա՛ղ փառացս անցաւորի»<sup>(11)</sup> :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

(1) Ենթարկուիլ . — Մէկուն իշխանութեան տակ մտնել :

(2) Դիզել . — Վրայի վրայ դնել :

(3) Բլուր . — Պատիկ լեռ :

(4) Նուազիլ . — Պակսիլ :

(5) Նետ . — Փայտէ կոթով և երկաթէ ծայրով հին զէնք մը :

(6) Սրճակել . — Նետել :

(7) Խափանել . — Ծածկել :

(8) Նուանել . — Իր իշխանութեան տակ առնել :

(9) Գրաւել . — Մէկուն ունեցածը ձեռքէն առնել :

(10) Աշխարհակալ . — Շատ երկիրներ զրաւող :

(11) Աւա՛ղ փառացս անցաւորի . — Մէղը անցած փառքե-

րուաւ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — Ո՞վ Արտաշէս — ի՞նչպէս մարդ էր :  
Ի՞նչ բանի կը փափաքէր — իր փափաքը կատարուեցա՞ւ : — Իր  
զօրքը հաւաքելով որ կո՞ղմ զնաց : — Իր զօրքերուն համար ի՞նչ  
կը պատմեն : — Հայերը այն ատեն ի՞նչ կրօնք ունէին : — Արտաշէս  
իր զացած տեղը ի՞նչ կ'ընէր : — Արտաշէս ի՞նչպէս մեռաւ : — Մե-  
ռած ատենը ի՞նչ ըստ :

### 5 ԱՐԴԱԼՈՅԱԿԻՆ ՀԱՑԻԿԸ

Արշալոյսին մայրիկը հացերը փուռէն նոր հաներ էր,  
երբ իր փոքրիկ աղջիկը դպրոցէն տուն եկաւ :

Արշալոյս այնչափ անուշ, այնչափ սիրուն ու բարի  
աղջիկ մըն էր որ ամէնքը կը սիրէին զինքը, այնչափ  
հաճոյակատար էր, որ ամէնքը կ'ուզէին զինքը գոհ ընել :

Մայրիկը կարագով ու հաւկիթով հացիկներ շներ էր  
Արշալոյսին համար՝ որ զանոնք շատ կը սիրէր :

— Առ, աղջ՛կս, բաւ, անոր մայրը, սա հացը, սա  
ինձորն ալ ու գնա՛ պարտէզը կ'եր :

Արշալոյս ցատքելով ցատքութելով պարտէղ վագեց ,  
և հոն ծառի մը տակ նստաւ .

Նախ խնձորը կերաւ , բայց համով հացերէն դեռ պատառ մը բերանը չըրած՝ տեսաւ որ փոքրիկ թուչուն մը կը մօտենայ իրեն , յետոյ , երկրորդ մը՝ յետոյ ուրիշներ՝ տասը քսան հատ ետեւէ ետեւ գորչ(1) , կարմիր , դեղին , մեւով ճերմակ աղուորիկ թուչուններ որոնք ճիւ ճիւ կ'երգէին :

Արշալոյս հասկցաւ որ ասոնք անօթի էին , թերեւս(2) իրմէ աւելի անօթի , և հաց կ'ուզէին . կրնա՞ր անոնց խընդիրքը(3) մերժել :

Ու սկսաւ իր հացը փշրել ու անոնց նետել :

Բայց այդ թուչուններուն ոչ մէկը միւսին կը նմանէր բնաւորութեամբ : Մէկ քանիները իր ուաքին առջեւ հանդարտ կեցած կ'սպասէին որ փշրանքը իրենց կտուցին(4) համնի : Ուրիշներ իր շուրջը կը դառնային վարպետութեամբ : Նոյն իսկ ոմանք գողի պէս կու գային իր ճեռքի հացը կը կտցէին(5) :

Արշալոյս շարունակ կը փշրէր ու ամէնուն ալ կը նետէր , բայց ամէնուն ալ բերանը հաւասարապէս փշրանք չէր համներ : Հասկցաւ որ ամէնէն համարձակները և ամէնէն վարպետորդիները միւսներուն բան չպիտի ճգէին :

— Սովոր արդար բան չէ . բայտ , պէտք է ամէնքն ալ ուտեն :

Եւ շատ յոգնութիւն քաշեց մինչեւ որ ամէնքն ալ կշտացուց : Իր հացիկը ամբողջովին փոքրիկ երգիչներուն բաժներ էր , բայց գոն եւ ուրախ տուն դարձաւ :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ .** — Բարի աղջիկ մը երջանիկ կ'ըլլայ իր ունեցածը իրմէ աւելի կարօներուն տաղու :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Գործ . — Մոխրագոյն :
- (2) Թակեւս . — Կարելի է :
- (3) Խնողիրք . — Աղաչանք :
- (4) Կեռուց . — Թուչուններուն բերանք :
- (5) Կացել . — Կտուցով պղտիկ պղտիկ փրցնել :

ՃԱՐՅՈՒՄՆԵՐ . — Երբ Արշալոյս տուն եկաւ , մայրիկը ի՞նչ լսաւ իրեն : — Արշալոյս ի՞նչ ըրաւ : — Ո՞վ մօտեցաւ Արշալոյսին : — Թուչունները ինչպէս էին : — Արշալոյս ի՞նչ ըրաւ : — Թուչունները ի՞նչ կ'ընէին : — Ամէնքն ալ հաւասարապէս կ'ուտէի՞ն : — Արշալոյս ի՞նչ ըրաւ : — Արշալոյս ալ կերա՞ւ :

39 208  
5-5-57



### 6. ԷՄՄԱՆ ԵՒ ԹՌՉՆԻԿՆԵՐԸ

Զիւնը սաստիկ կը տեղար  
Ամպերն ի վար , օդն ի վար . . . . .

Գետինը սատ էր պատեր ,



Եւ կտրեր էր հողը քար .  
Զիւնը սաստիկ կը տեղար :

Թռչնիկները անօթի  
Քաշուեր էին ա'լ մէկդի .  
Հաց չունէին ուտելու ,  
Եւ ոչ հատիկ մը հունափ<sup>(1)</sup>  
Թռչնիկները անօթի :

Փոքրիկ էմման բարեսէր  
Առառն պարտէզ կը վազէր ,  
Եւ հաստ ու մեծ պատին տակ  
Կը փշրէր հաց , միրգ<sup>(2)</sup> ու սեր  
Փոքրիկ էմման բարեսէր :

— Զիւնին , բուքին<sup>(3)</sup> տակ այսպէս ,  
Հարցուց հայրը , ի՞նչ կ'ընես :  
— Ի՞նչ որ կ'ընես դուն , հայրի՛կ ,  
Թշուառներուն կ'օգնեմ ես  
Զիւնին , բուքին տակ այսպէս :

ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Երբ հարկ ըլլայ դժբախտ մը ախո-  
փել , մի՛ խնայել ոչ ձեր յոգնուրիննը , ոչ ձեր ուժը :

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(<sup>1</sup>) Հունա . — Արմ.

(<sup>2</sup>) Միրգ . — Պառւղ:

(<sup>3</sup>) Բուք . — Հովով խառն անձրեւ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — Օդը ի՞նչպէս էր : — Գետինը ի՞նչ եղեր էր —  
Թռչունները ի՞նչ վիճակի մէջ էին — Հայրը ի՞նչ հարցուց էմմային —  
Էմման ի՞նչ պատասխանեց :

#### 7. ՄԱՍԻՍ ԼԵՌԸ

Այս պատկերին մէջ կը տեսնէք երկու գագաթներ  
որոնք հեռուն որոշ կ'երեւան . երկուքն ալ ձիւնապատ<sup>(1)</sup>  
են : Մէկը շատ աւելի բարձր է և կը կոչուի մեծ Մասիս ,  
իսկ միւսը կը կոչուի փոքր Մասիս : Այս լեռները կը կոչ-  
ուին նաև մեծ Արարատ , փոքր Արարատ :

Մեծ Արարատը Հայաստանի ամէնէն բարձր լեռն է ,  
և նոյն իսկ բոլոր աշխարհի ամէնէն բարձր լեռներէն մէկը :

Կ'ըսն թէ Նոյ Նահապետին տապանը այս լեռան  
վրայ կանգ առած է ջրհեղեղէն ետքը :

Հին ատենները Հայերը կը կարծէին թէ կարելի չէր  
անոր գագաթը<sup>(2)</sup> ելլել , որովհետեւ Նոյի տապանին կտոր-  
ուանքը այնտեղ կը մնային , և Աստուծոյ կողմէ արգիլ-  
ուած էր անոնց մօտենալ :

Կը պատմուի թէ Յակոբ անուն եկեղեցական մը  
փորձեց Մասիսն վեր ելլել , և յաղթելով ճամբու զըժ-  
ուարութեանց , բաւական բարձրացաւ : Գիշերը սակայն  
քունը տարաւ , և երբ առտուն արթնցաւ , ինքինքը  
գտաւ Մասիսի ստորոտը<sup>(3)</sup> . կրկն փորձեց վեր ելլել , և  
միեւնոյն բանը պատահեցաւ :

Սակայն վերջին ատեններս Եւրոպացիք յաջողեցան  
Արարատին գագաթը ելլել , ինչպէս եղած են բոլոր բարձր  
լեռներուն կատարը<sup>(4)</sup> :

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(<sup>1</sup>) Զիւնապատ . — Զիւնով ծածկուած :

(<sup>2</sup>) Գագաթ . — Գլուխ:

(<sup>3</sup>) Ստորոտ . — Տակը :

(<sup>4</sup>) Կատար . — Գլուխ:



ՄԱՍԻՆ ԼԵՅ

**ՃԱՐՅՈՒՄՆԵՐ.** — Այս պատկերին մէջ ի՞նչ կը տեսնէք, — ի՞նչպէս են զազաթները, — ի՞նչպէս կը կոչուին ատոնք, — Այդ լերան վրայ ի՞նչ զիտէք, — ի՞նչ է նոյի տապանք, — ի՞նչ է ջրհեղեղը, — Հայաստանի ամէնէն բարձր լեռը ո՞րն է, — Հին ատենները ի՞նչ կը կարծէին այդ լերան մասին, — Արարատին զլուխը ելել փորձողին ի՞նչ պատահեր էք, — Հիմայ Արարատին կատարը ելլողներ կա՞ն:

## 8. ԶԱՐԵԴԻՆ ԱՂՋԹՔԸ

Զարեհ փոքրիկ տղեկ մըն էք, հազիւ վեց տարեկան։ Առառու մը, երբ անկօղնէն ելաւ ու գնաց նախաճաշ լնելու, մայրը ըստաւ իրեն։

«Տղա՛ս, այսօր բան մը չունիմ քեզի տալու. ոչ հաց կայ, ոչ պանիր, ոչ հաւկիթ։ Աղօթէ՛ Առառուծոյ որ ողորմի մնալի։»

Զարեհ անօթի գուրս ելաւ որ գպրոց երթայ։ Սիրաը կը մարէք, և աչքերը արցունքով կը լեցուէին մոտածելով որ իր պղտիկ եղբայրը, Արշակ և մայրիկը անօթի կը մնային։

Բայց մօրը պատուէրը<sup>(1)</sup> չէք մոռցեք, և գպրոց երթալէ առաջ, եկեղեցի գնաց Աստուծոյ ողորմութիւնը խնդրելու։

Եկեղեցին մարդ չկար, և Զարեհ ծունկի գալով նկատւ բարձր ձայնով աղօթել ու ըսել.

«Ո՛վ Աստուած, երկու եղբայր ենք, և մայր մը ունինք որ այրի<sup>(2)</sup> է։ Ենքան մայրիկս շատ կ'աշխատի զմեղ կերակրելու համար, բայց երէկ գործ չէ գտեր, և ուտեւ լիք բան մը չունինք։ Ողորմէ մնալի, և քիչ մը ուտեղիք պրկէ՛ որպէս զի անօթի չմնանլնք։»

Երբ աղօթքը աւարտեցաւ<sup>(3)</sup>, Զարեհ աչքերը սրբեց  
ու դպրոց զնաց :

Իրիկունը երբ առւն գարձաւ, սեղանը պատրաստ-  
ուած էր, և մէջ տեղը զրուած՝ աղուոր տապկած հաւ  
մը, խաշած հաւկիթներ, պանիր ու պառովներ :

«Ո՛հ, գոչեց ուրախութեամբ ձեռքերը իրարու զար-  
նելով, Աստուած աղօթքու լսեր է : Մայրիկ, հրեշտա՞կ  
մը բերաւ ասոնք» :

— Ո՛չ, պատասխանեց մայրը, բայց Աստուած ձայնդ  
լսեց : Այս առառու եկեղեցին աղօթած ատենդ՝ զիմացի  
մեծ ապարանքին տիկինը պահարանին մէջ է եղեր, լսեր  
է քու աղօթքու, ու ետեւէդ գպրոց գալով հարցուցեր  
հասկցեր է քու ով ըլլալու, և շատ մը ուտելիքներ դրկեր  
է մեղի :

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ . — Աստուած կողորսի ամեն անոնց  
որ իրեն կը դիմեն :**

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Պատուէր.** — Խրատ :

(2) **Այրի.** — Ամուսինը մեռած :

(3) **Աւարտեցաւ.** — Վերջացաւ :

(4) **Ապարանք.** — Մեծ և փառաւոր տուն :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ . — Զարեհ Ե՞րբ անկողնէն ելաւ, մայրը ի՞նչ  
ըսաւ իրեն : — Զարեհ ի՞նչ ըրաւ, — Ինչո՞ւ աչքերը արցունքով կը  
լեցուէին : — Զարեհ ինչո՞ւ եկեղեցի զնաց : — Ի՞նչ աղօթք ըրաւ, —  
Իրիկունը երբ տուն դարձաւ, ի՞նչ զտաւ սեղանին վրայ : — Այդ հաւը  
ո՞վ դրկեր էր :**



#### **9. ԱՂՕԹՔ ԸՐԷ**

Աղօթք ըրէ՛, փոքրիկ աղջի՛կ,  
Երբ արթննաս առառուն կանուխ,  
Եւ իրիկուան մութը սաստիկ  
Երբ տարածէ իր քողը թուխ :

Անձիդ համար երբ աղօթես,  
Աստուծմէ խելք ուզէ՛ միայն .  
Որ ծողղքըդ սիրեն զքեզ,  
Երբեք քեզմով դժբախտ չըլլան :

Աղօթք ըրէ՛ հիւանդներուն  
Եւ որբ աղոց համար անդօր .  
Աղօթքիդ մէջ միշտ խնդրէ՛ դուն  
Որ չացրենիքդ ըլլայ հըզօր :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Փոքրիկ աղջիկը լինչ պէտք է ընէւ — իր ան-  
ձին համար ի՞նչ պէտք է ուզէ Աստուծմէ: — Ինչու համար պէտք է  
աղօթէ: — Ուրիշ լինչ խնդրելու է աղօթքին մէշ:

## 10. ՓԻՍԻԿԸ ԵՒ ՃԱԳԱՐՆԵՐԸ

Փիսիկ աղբարը, որ մը, պատյափի ելած էր գիւղին  
մօտերը, երբ պասի մը ծայրը ճագարնոց (1) մը նշմա-  
րեց ու ներս մտաւ:

Ճագարները, մեծ ու պղտիկ, սարսափահար (2) ծակէ  
ծակ փախան, բայց մեր  
փիսիկը չյուսահատե-  
ցաւ, գնաց անկիւն մը  
խելօքիկ մը նստաւ.  
կարծես մէկուն կ'սպա-  
սէր:

Ճագարները տես-  
ներով որ կատուն եր-  
թալիք չունէր, իրենց  
կողմէ պատզամաւոր-  
ներ (3) զրկեցին հարցը-  
նելու համար թէ ի՞նչ  
ընելու եկած էր իրենց բնակարանը, և ի՞նչ կ'ուզէր:

Անուշ ձայնով մը պատասխանեց կատուն թէ եկած  
էր իրենց աղզին բարքերը ուսումնասիրելու (4), թէ աշ-  
խարհի ամէն կողմը կը ստըռէր տեղեկանալու (5) համար  
ամէն տեսակ անսասուններու սովորութեանց:

Միամիտ պատզամաւորները հաւատացին անոր խօս-  
քին, ու գացին իրենց եղբայրներուն իմացուցին թէ այդ

օտար հիւրը ծշմարիտ վիլխոտիայ (6) մըն էր, ու սկսան  
դովիկ անոր համաստ կերպարանքը, փառաւոր մուշտակը,  
անուշ աչքերը և ներդաշնակ ձայնը:

— Այս կենդանին, կ'ըսէին ճագարները, եկած է  
իմաստութիւն փրն-  
արուել. բոլոր մեծ  
քաղաքները ճամ-  
բորդած է եղեր, հի-  
մայ Շիքակոյէն (7)  
կու գայ ու ժրանս-  
վաալ (8) պիտի եր-  
թայ. ասանկ երե-  
ւելի (9) գիտունէ մը  
մեզի վնաս չի կրնար  
գալ:


Այս աղբուոր խօս-  
քերը մեծ աղգեցութիւն ըրին ժողովուրդին վրայ:

Միայն ծերունի ճագար մը չկրցաւ համողուիլ այդ  
ծանրաբարոյ փիլխոտիային խօսքերուն. բայց անոր խօսքը  
ո՞վ մտիկ կ'ընէր. բոլոր ճագարները իրար անցեր էին, ու  
մեծ բազմութեամբ գացին ողջունել (10) Փիսիկը, որ խ-  
կոյն վրանին ցատքելով վեց հօթը հատը մէկն խեղդեց:

Միւսները ծակերնին փախան սարսափած, ամչսալով  
իրենց անխմարհուրդ (11) գործէն,

Այս ատեն, մեր վարպետ կատուն ամսնոց որջին (12)  
դրանը առջին եկաւ, անուշիկ ձայնով մը բացատրելով  
թէ շատ անօթի ըլլալուն այդ յանցանքը գործած էր, և  
թէ այսուհետեւ բնաւ ճագարի մը ձեռք չպիտի գոցնէր.  
այս մասին յախտենական (13) զաշինք (14) կնքելու պատ-  
րաստ էր իրենց հետ:

Խսկոյն, ճագարները հետը խօսակցութեան սկսան,  
սակայն առանց անոր ճամնկերուն մօտենալու, և ժամե-



բով բանակցութիւնը շարունակեցին, մինչեւ որ իրենց եղբայրներէն մէկը որջին ետեւի կողմէն դուրս ցատկելով, գնաց մօտերը գտնուող հովիւ մը կանչեց :

Հովիւր իր աղեղն ու նետը առաւ ու վազեց եկաւ, կատուն տեսաւ, և նետ մը արձակելով գետինը փռեց զայն: Կատուն վերջին շունչը տուած ատեն ըստաւ.

«Անգամ մը որ խարես, ա՛լ մէկը չի հաւատար խօսքիդ:»

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Սախոսը երե օր մը ճշմարիտ աշ ըսկ, իրեն չեն հաւատար:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(<sup>1</sup>) **Ճագարնաց.** — Ճագարներու բնակարան:

(<sup>2</sup>) **Սարսափահար.** — Շատ փափած:

(<sup>3</sup>) **Պատգամաւորներ.** — Լուր տանող բերողներ:

(<sup>4</sup>) **Թարթերը ուսումնասիրել.** — Հասկնալ թէ ինչպէս կ'ապրին:

(<sup>5</sup>) **Տեղեկանալ.** — իմանալ:

(<sup>6</sup>) **Փիլիսոփայ.** — իմաստուն մարդ:

(<sup>7</sup>) **Շիքակօ.** — Ամերիկայի մէջ բաղաք մը:

(<sup>8</sup>) **Թորանսվաալ.** — Արքիկէի մէջ անզլիական երկիր մը:

(<sup>9</sup>) **Մրեւելի.** — Ամէն կողմ ճանչցուած:

(<sup>10</sup>) **Ողջունել.** — Բարեւել:

(<sup>11</sup>) **Անխորհուրդ.** — Առանց մտածելու:

(<sup>12</sup>) **Որջ.** — Կենդանիներու բնակարան:

(<sup>13</sup>) **Չաւիթենական.** — Մինչև աշխարհի վերջը տեւող:

(<sup>14</sup>) **Գաւչինք.** — Պայմանագիր:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Փիսիկ ալբարը ինչ նշմարեց եւ ուր մտաւ: — Ճագարները ինչ ըրին: — Կատուն ինչ ըրաւ: — Ճագարները ովզ զոկեցին Փիսիկին եւ ինչ հարցուցին: — Ի՞նչ պատասխանեց կատուն: — Պատգամաւորները ինչ պատասխան բերին իրենց եղբայրներուն: — Ուրկէ կուգայ եւ ուր կ'երթայ եղեր կատուն: — Ճագարները հաւատացի՞ն այս խօսքերուն: — Եթե ճագար մը ինչ կարծիք յայտնեց: — Երբ ճագարները գացին ողջունել փիսիկը, անիկա ինչ ըրաւ: — Երբ ճագարները փախան, ինչ ըստ: — Այս անգամ ճագարները հաւատացի՞ն անոր խօսքին: — Ինչու չհաւատացին:

### II. ԳՈՂՑՈՒԱԾ ԶԻՆ

Գիշեր մը, ագարակապանի (<sup>1</sup>) մը ձին գողցուեցաւ իր ախոռին մէջէն: Մշակութեան եղանակն (<sup>2</sup>) էր, եւ խեղճ մարդը անհրաժեշտ (<sup>3</sup>) պէտք ունենալով ձիու մը, հարկադրուեցաւ (<sup>4</sup>) ուրիշ մը զնել:

Սակայն վաճառանոց (<sup>5</sup>) հասաւ չհասաւ, տեսաւ որ իր ձին այնտեղ կապուած էր: Անմիջապէս քովը մօտեցաւ, սանձէն (<sup>6</sup>) բռնեց, ու պահանջեց զայն ծախունողէն որ ետ տայ իր ձին:

— Խելքի՞դ եւ կեր է, մա՛րդ Սատուծու, պատասխանեց ձիավաճառը, այս ձին ես անցեալ տարի գնած եմ, և տարիէ մը ի վեր քովս է. կարելի է քուելինիդ կը նմանի, բայց անիկա չէ:

— Է՞հ, շատ աղէկ, պոռաց ագարակապանը, իսկոյն երկու ձեռքերովը ձիուն աչքերը գոցերով, քանի որ քուկդ է, ըսէ՛ նայիմ, ո՞ր աչքը կոյր է:

Գոռլ որ մանրամասնաբար (<sup>7</sup>) քննած չէր ձին, վայրկեան մը չուարեցաւ (<sup>8</sup>), սակայն յետոյ ինքզինքին գտնով, բատ բախտի (<sup>9</sup>) պատասխանեց:


— Զախ աչքը կոյր է:

— Կը սիսալիս, գոչեց գիւղացին, ձախ աչքը բան մը չունի:



— Այո՛, այո՛, աջ աչքը պիտի ըսէի, պատասխանեց աւազակը:

— Հիմայ յայտնի է թէ, ըսաւ ագարակապանը իր



տիկանները<sup>(12)</sup> գողը բռնեցին, ագարակապանը ուրախ դուարի իր ձիուն վրայ հեծնելով, իր զիւղին ճամբան բռնեց:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Սուս խօսողը եւ խարդախորին ընողը միշտ կը խայտառակուի:

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Ագարական.** — Ագարակ՝ բանեցնող: [Ժամանակ]

(2) **Մշակուրեան եղանակ.** — Հողը փորելու և ցորեն ցանելու:

(3) **Անդրածես.** — Անպատճառ:

(4) **Հարկադրուեցաւ.** — Ուզէ չուզէ պէտք եղաւ:

(5) **Անառանց.** — Շուկայ:

(6) **Սահման.** — Ձիուն վիզէն անցած չուսնը,

(7) **Մանրամասնաբար.** — Մէկիկ մէկի:

(8) **Ծուարեցաւ.** — Ինչ ըսելիքը չփափաւ:


(9) **Քսա բախտի.** — Բերնին եկածը:

(10) **Աւազակ.** — Գող:

(11) **Միականի.** — Մէկ աչք ունեցող:

(12) **Ոսիկան.** — Գողերը, չարագործները բռնող պաշտօնեայ (Բ\*\*\*):

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Գիշեր մը ինչ պատահեցաւ ագարակին մէջ՝ Ագարակապանը ինչ ընել հարկադրուեցաւ: — Վաճառանոցին մէջ ինչ տեսաւ: — Ի՞նչ ըրաւ երբ իր ծին տեսաւ: — Միւս մարդը ինչ պատասխանեց: — Այն ատեն ինչ ըրաւ ագարակապանը: — Գողը ինչ ըսաւ: — Ինչպէս յայտնի եղաւ անոր գող ըլլալը: — Զիւն նր աչքը կոյր էր:



#### **12. ԱՆՈՒՈՐ ԴԱՍ ՄԸ**

Խեղճ հովուուհի մը իշուկներ առած,

Դաշտերուն մէջէն կ'երթար յամրընթաց<sup>(1)</sup>,

Երբ իր դէմն եղան անառակ մանչեր ,  
Գիւղին գպրոցէն նոր արձակուած դեռ ,  
Որոնց կը պակսէր նիւթ մը ինդալիք :  
— Բարի՛ լոյս , ըստ , էշերու մայրի՛կ ,  
Մէկն որ ամէնէն խենդուկն էր խումբին :  
— Զաւակներս , յարեց իսկոյն հովուուհին ,  
Աստուծո՞ւ բարին :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Ծաղրողը միշտ կը ծաղրուի :**

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

(1) **Յամրբաց.** — Կամաց կամաց բալելով :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Հովուուհին ինչ կ'ընէր? — Իր դէմը՝ նոյնաւու մանչերուն ինչ կը պակսէր? — Անսնցմէ ամէնէն խենդուկը ինչ ըստ հովուհին: — Հովուուհին ինչ պատասխանեց , — Ինչ հասկցանք այս ոտանաւորէն:

---

### 13. ԱՆԻՐԱԻ ԳԱՆԳԱՏ

Վաճառական մը տօնավաճառէն(1) տուն կը դառնար : Զիուն կոնակին վրայ պայուսակ(2) մը դրեր էր , որուն մէջ շատ դրամ կար :

Սաստիկ անձրեւ կու զար , և խեղճ մարդը մինչեւ ոսկորները թրջուեր էր : Ուստի կրած նեղութենէն զըդգո՞ւ՝ կը գանգատէր(3) Աստուծոյ դէմ:

Ճամբան՝ հարկ եղաւ իմիտ անտառէ(4) մը անցնիլ : Հազիւ քիչ մը առաջ գացեր էր , երբ սարսափելով տեսաւ որ գող մը ծառի մը ետին կեցեր՝ հրացանը ձեռքը նշան կ'առնէր իրեն : Բայց հրացանը կրակ չառաւ , և

վաճառականին կեանքը ազատեցաւ , որովհետեւ գողին վառօդը անձրեւէն թրջուեր էր :

Այն ատեն վաճառականը հասկցաւ թէ որքան անիւրաւ(5) էր Աստուծոյ դէմ գանգատելուն :

Եթէ անձրեւ չգար , մարդը մեռած պիտի ըլլար , և իր տղաքը ի զուր(6) պիտի սպասէին իր դարձին , բայց Աստուծած որ բարի է , այդ անձրեւը դրկեր էր անոր թէ կեանքը , թէ դրամը ազատելու համար :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Երբեք մի՛ զանգատիր Աստուծոյ դեմ , որովհիւեւ ինչ որ կ'ընէ բարի է :**

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

(1) **Տօնավանառ.** — Տեղ մը ուր առեւտուրով զբաղովներ որոշեալ օր մը իրենց վաճառքը կը բերեն ծախսու (բազու) :

(2) **Պայուսակ.** — Դպրոցականի կամ ճամբորդի պարկ (շանթա) :

(3) **Կը գանգատէր.** — Դժգոհութիւն կը յայտնէր :

(4) **Խիս անեառ.** — Շատ ծառերով անտառ (սեխ) :

(5) **Անիրաւ.** — Իրաւունք չունեցող :

(6) **Ի զուր.** — Պարագ տեղը :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Վաճառականը նրկէ՝ կը դառնար եւ հետը ինչ ունէր . . . ինչո՞ւ կը գանգատէր Աստուծոյ դէմ . . . Անտառէն անցած ատենը ինչ տեսաւ . . . ի՞նչպէս կրցաւ մահութնէ ազատիլ . . . եթէ անձրեւ չգար , ինչ պիտի ըլլար . . . Աստուծած ինչո՞ւ դրկեր էր անձրեւը :

---

### 14. ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Երկու փոքրիկ մուկեր իրենց ծակէն դուրս եղան ուտելիք գտնելու համար :

Մէկուն անունը ծպիկ էր , միւսինը՝ Պղիկ :

Ասղին անդին պտըտելէ յետոյ, մացառի<sup>(1)</sup> մը մէջ հաւկիթ մը գտան, զոր հաւ մը նոր ածեր էր:

— Աս ի՞նչ աղուոր ուտելիք է, ըստ ձզիկ ուրախութենէն հաւկիթին շուրջը ցատքուտելով:

— Կեցիր նայինք մեզի պիտի մնա՞յ, ըստ միւսը, ընկերոջը ցոյց տալով աղուէսը որ հեռուն, անտառին եղերքը կայներ էր:

— Փախչի՞նք, պոռաց ձզիկ, վախէն դողալով. մեր կողմը կու գայ կոր:

Իրաւ աղուէս աղբարն ալ ուտելիք փնտուելու ելեր էր, բայց մեր մուկիները չէր տեսներ տակաւին:

— Հաւկիթնիս անո՞ր պիտի թողունք, գոյեց Պղիկ: Զէ՛, ես անօթի եմ. պէտք է որ հետերնիս տանինք:

Աղէկ. բայց ի՞նչպէս պիտի տանէին: Ասիկա զըժ-

ուար գործ էր: Մուկերը վազելու համար իրենց չորս տոտիկներուն պէտք ունէին, և հաւկիթը իրենց տոտիկներուն մէջ առնելով չէին կրնար քալիկ: Հաւկիթը պոչ կամ ծայր չունէր որ բերաննին առնէին ու ետեւնէին քաշէին: Զէին կրնար զլտորեկ<sup>(2)</sup>, որովհետեւ հաւկիթը ճամբան կը կոտրէր: Ի՞նչ ընէին: Աղուէսը սկսեր էր իրենց կողմը գալ:

— Սըտեղը կոնակի վրայ պառկէ՛, ըստ Պղիկ իր ընկերոջը, և չորս տոտիկներուդ մէջ հաւկիթը աղէկ մը



բոնէ՛ փորիդ վրայ. ես ալ քու պոչէդ խածնելով, զքեզ կը քաշեմ մեր ծակը կը տանիմ:

— Այո՛, այո՛, աղէկ ըսիր: Բայց պոչս քաշած աւենդ շատ չցաւցնես:

— Ո՛չ, մի՛ վախնար, ուժով չեմ խածներ: Շուտ ընենք, հիմայ աղուէսը կու գայ:

Ճզիկը կոնակի վրայ պառկեցաւ, և Պղիկը հաւկիթը անոր չորս տոտիկներուն մէջտեղը դրաւ: Յետոյ անոր պոչը իր ցոռուկին<sup>(3)</sup> մէջ առաւ ու սկըսաւ քաշել:

Դիւրին գործ մը չէր ասիկա: Ճամբուն վրայ քարեր կային, և կը վախնար որ ընկերոջը ոսկորները կը

ցաւին, մորթը կը պատուի: Յետոյ շատ շուտ չէր կրնար երթալ, որովհետեւ ստիպուած էր ետ ետ քալելու:

Բայց վերջապէս երկու մուկիկները ողջ առողջ իրենց ծակը հասան, և շուտ մը հաւկիթով մէկտեղ ներս մտան ու հանգիստ սրտով կերան:

Աղուէսը զանոնք աչքէն կորմնցնելով, ետ գարձաւ: Այսպէս երկու փոքրիկ կենդանիները զիրար սիրենուն և իրարու օգնենուն համար, կրցան ամէնէն խորամանկ<sup>(4)</sup> կենդանին ձեռքէն ազատիլ:

Եթէ իրարու հետ չհամաձայնէին, իրարու հետ կըռուէին, ի՞նչ պիտի ըլլար:

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Պէտք է միշտ իրարու օգնել:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (<sup>1</sup>) Մացառ. — Փշոտ ծիւղեր։  
 (<sup>2</sup>) Գլուռել. — Ինչ իր վրայ դարձնելով բալեցնել։  
 (<sup>3</sup>) Ֆւռւկ. — Կենդանիներու բերանը։  
 (<sup>4</sup>) Խորամանկ. — Վարպետորդի։

ՃԱՐՑՈՒՄՆԵՐ. — Մուկերը ինչու դուրս ելան իրենց ծալէն։ — Ի՞նչ գտան, — երբ հաւկիթը պիտի ուտէին ով տեսան, — ձզիկը ինչ ըստւ։ — Պզիկը ինչ միջոց գտան հաւկիթը փախցնելու։ — Ձզիկը ինչպէս պառկեցաւ, եւ հաւկիթը ինչպէս րոնեց, — Պզիկը ինչու կահաց կը քաշէր ձզիկին պրէն։ — Մուկիկները ինչու յաջողեցան։ — Եթէ իրարու նետ կռուէին, ինչ պիտի ըլլար։

---

**15. ՈՐՅԸ ԵՒ ԿՆՉՆԻՆ**

«Աւա՛զ լսեչակս(<sup>1</sup>) իմ կռտեցաւ մրրիկէն։

Տաք արեւուն կայծերը զիս կը մրկեն(<sup>2</sup>),»

Կ'ըսէր որթ(<sup>3</sup>) մը գետին ինկած յուսահատ,

Ու կը թափէր արցունք շատ։

Հոն կնձնի(<sup>4</sup>) մը կը բարձրանար յաղթ(<sup>5</sup>) ու սէգ(<sup>6</sup>),

Որ յուղուելով արցունքներէն որթին հէք(<sup>7</sup>),

Անոր վրայ ձրգեց թեւերն իր գրթած,

Եւ մրմնչեց ձայնով ցած։

— Եկո՛ւր, ըլլամ քեզի նեցուկ(<sup>8</sup>), ապաւէն(<sup>9</sup>)։

Պատսպարեմ ըզքեզ տաքէն ու հովէն։

Անբեր(<sup>10</sup>), ամուլ(<sup>11</sup>) և անօգուտ ծառ մ'եմ ես.

Գէթ օդտակար ըլլամ քեզ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Միշ պէս է զօրաւորը ևկարին օգնէ, ունեցողը յունեցովին տայ։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (<sup>1</sup>) Խեչակ. — Փայտ մը որ տունկերը վեր բռնելու կը ծառայէ։  
 (<sup>2</sup>) Կը մրկեն. — Այրելու չափ կը տաքցնեն։  
 (<sup>3</sup>) Ուր. — Խաղողի տունկ։  
 (<sup>4</sup>) Կնձնի. — Ծառ մը (չորս աւած)։  
 (<sup>5</sup>) Յաղը. — Մեծ և զօրաւոր։  
 (<sup>6</sup>) Սէզ. — Հպարտ։  
 (<sup>7</sup>) Հէմ. — Խեղճ։  
 (<sup>8</sup>) Նեցուկ. — Կոթնելու տեղ։  
 (<sup>9</sup>) Ապաւէն. — Պաշտպան։  
 (<sup>10</sup>) Անբեր. — Պտուղ չտուող։  
 (<sup>11</sup>) Ամուլ. — Պտուղ չտուող։

ՃԱՐՑՈՒՄՆԵՐ. — Որթը ինչ կ'ըսէր եւ ինչ կ'ընէր։ — Կնձնին ինչ ըրաւ անոր։ — Ի՞նչ ըսաւ անոր։

---

**16. ՔԱԶԱՍԻՐՏ ՈՒԼԻԿԸ**

Մեծ մայրաքաղաքներու մէջ կը գանուի ընդարձակ պարտէզ մը, որուն մէջ աշխարհիս չորս կողմերէն տեսակ տեսակ ծաղիկներ, բոյսեր և կենդանիներ կը հաւաքեն ու կը խնամին։ Այս պարտէզին Բուսաբանական անունը կու տան, և անոնց մուտքը աղատ է(<sup>1</sup>)։

Բարիզի Բուսաբանական պարտէզին մէջ շատ խոշոր պիուա(<sup>2</sup>) մը կար, որուն ամէն առտու ուլիկ մը կը տանէին որ ողջ ողջ ուտէ։

Սովորաբար, խեղճ ուլիկը այդ զարհուրելի(<sup>3</sup>) օձը սեւանելով, այնքան կը վախնար, որ կ'երթար վանդակին մէկ անկիւնը կը կծկտէր, և առանց դիմազրելու, կը թողուր որ զազանը զինքը ուտէ։

Անցեալները, սեփ սեւ ուլիկ մը տարին, բայց անիւ-

կա միւսներուն պէս հանդարտ չկեցաւ . սկսաւ կոտոշներով<sup>(4)</sup> և ոտքերով հարուածներ տալ օձին զիսուն :

Պիտի մտածէք անշուշտ թէ խնդութիւն էր ասիկա , քանի որ պօան այնչափ մեծ , այնչափ ուժով էր , որ վերջը վերջը պիտի ուտէր խեղճ փոքրիկ կենդանին :

Բայց այնչափ թալթլեցաւ սեւ ուլիկը , այնչափ քաշութեամբ կոռւեցաւ , որ պարտէզին պահապաններէն մէկը ըստ :

Այս կենդանին կատղեր է , մեր պօային աչքը պիտի հանէ , առնենք տանինք , թո՛ղ հանդարտի . վաղը նորէն կը բերենք :

Եւ ուլիկը գուրս հանեցին վանդակէն , ու անոր տեղ ուրիշ մը բերին զոր օձը կերաւ :

Հետեւեալ օրը սեւ ուլիկը նորէն առջի օրուան պէս ըրաւ . ոտքերով , կոտոշներով սկսաւ ուժին հարուածներ տալ օձին :

Այդ միջոցին Բուսաբանական պարտէզին տնօրէնը հոնկէ կ'անցնէր . հարցուց վնտոեց , և սեւ ուլիկին քաշաբառութիւնը<sup>(5)</sup> այնքան իր սիրալ շարժեց , որ վարձատրելու համար զայն , հրաման ըրաւ որ գուրս հանեն վանդակէն : Այսպէս մնոնկէ աշատեցաւ փոքրիկ սեւ ուլիկը որ հակառակ իր տկարութեան , համարձակեր էր ինքզինքը պաշտպանել ահարկու<sup>(6)</sup> օձին դէմ :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ .** — Քաջութեամբ եւ յարաւեւութեամբ ամենէն ևկարը կրնայ յաղթել ամենէն զօրաւորին :

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>(1)</sup> Մուտքը ազատ . — Այսպէս կը կոչուի տեղ մը ուր կրնաս մննել առանց դրամ վճարելու :

<sup>(2)</sup> Պօա . — Խոշոր օձ մըն է որ Ամերիկայի մէջ կը գտնուի . մինչև 6 մետր երկայն պօաներ տեսնուած են . Թունաւոր չէ , և իրմէ պղտիկ կենդանիներ ու միջատներ կ'ուտէ :

<sup>(3)</sup> Զարհութելի . — Շատ վախնալիք :

<sup>(4)</sup> Կոտու . — Եղիկը (պայնութեալ) :

<sup>(5)</sup> Քաջասրտութիւն . — Բանէ մը չվախնալ :

<sup>(6)</sup> Սիարկու . — Շատ վախնալիք :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ .** — Ի՞նչ է բուսաբանական պարտէզ մը : — Ո՞ւր կը գտնուի : — Բարիզի բուսաբանական պարտէզին մէջ ինչ կար : — Ինչ կ'ուտէր այդ մեծ օծը ամէն առտու : — Ուլիկը ինչ կ'ընէր երբ պօան տեսնէր : — Անցեալները , երբ սեւ ուլիկը տարին , ինչ ըրաւ անիկա : — Երբ պահապանը սեւ ուլիկին քաջութիւնը տեսաւ , ինչ ըրաւ : — Հետեւեալ օրը երբ սեւ ուլիկը նորէն տարին , ինչ ըրաւ : — Այն ատեն ինչ պատահեցաւ :



ԱՆԻՒ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ

#### 17. ԱՆԻՒ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

Հայաստանի կին քաղաքներուն մէջ , ամէնէն նշանաւորն է Անի , որուն աւերակները գեռ կ'երեւան :

Այս քաղաքը մեր հագրատունի թագաւորներուն կողմէ շնչած և մայրաքաղաք<sup>(1)</sup> եղած էր:

Կ'ըսն թէ հազարումէկ հատ եկեղեցի կար Անիի մէջ: Քաղաքը բարձր և ամուր պարիսպներով<sup>(2)</sup> շրջապատուած էր, որոց մեծ մասը դեռ կանգուն կը կենայ:

Պարիսպներէն ներս, քաղաքին մէջ կեցած է տակաւին Մայր Եկեղեցին<sup>(3)</sup> որ հազար տարի առաջ հիմնուած է Սմբատ թագաւորէն: Այս եկեղեցին շնչած է




ԱՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Տրդատ անունով նշանաւոր հայ ճարտարապետ<sup>(4)</sup> մը, որ նորոգած է նաև Ժ. դարուն մէջ՝ կ. Պոլսոյ Այա-Սօվիա եկեղեցին:

Անիի Մայր եկեղեցին մէջի մասը շինուած է սրբատաշ<sup>(5)</sup> քարերով: Հսկայ<sup>(6)</sup> սիւներու վրայ չորս կամարներ<sup>(7)</sup> կ'երեւան այնքան լայն, որ մէջերնէն կրնայ մարդ անցնիլ:

Կէս վլած չէնքերուն մէջ կ'երեւայ նաև, ուրիշ եկեղեցներէ զատ, թագրատունի թագաւորներուն պալատը որ եռայարկ<sup>(8)</sup> չէնք մըն է: Հին ատենները չէնքերը ընդհանրապէս միայարկ էին, և շատ հազուագիւտ էր տեսնել մէկ յարկէ աւելի ունեցող չէնքեր:



ԱՆԻԻ ԲԱՐՁՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս պալատէն կ'երեւայ գեղեցիկ տեսարան մը, Ծաղկոցաձորը՝ որուն մէջէն Ալաճա գետակը օձի պէս սողոսկերով, կ'երժայ կը թափի Ախուրեան գետին մէջ:

#### ՔԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Մայրաքամբ. — Այն քաղաքը ուր թագաւորը կը բնակի:

(2) Պարիսպ. — Բարձր և հասան պատեր:

(3) Մայր եկեղեցի. — Ամէնէն մեծ և փառաւոր եկեղեցին:

(4) Ճարտարապետ. — Ան որ չէնքեր շինելու արուեստը ունի:

(5) Սրբատա. — Մաքուր տաշուած:

(6) Հակայ. — Նատ մեծ և բարձր:

(7) Կամար. — Կէս բոլորակի ձեւով զարդեր:

(8) Եռայարկ. — Երեք յարկով:

**ՃԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Հայաստանի հին քաղաքներուն ամէնէն նշանաւորը նրն է: — Ո՞վ էր այս քաղաքը շէնցնողը եւ ւմայրաքաղաք ընողը: — Քանի հատ Եկեղեցի կար, կ'ըսեն, Անիփ մէջ: — Պարիսպին մէջի Մայր Եկեղեցին քանի տարի առաջ շնուած է: — Ո՞վ շնած է: — Ուրիշ բնչ շէնք կ'երեւայ աւերակներուն մէջ: — Այդ պալատէն ինչ կը տեսնուի:

## 18. ՀԱՅ ՏՂԱՅ

Ո՞վ հայ արդայ, քա՛ջ արդայ,  
Թոռնիկն ես քա՛ջ Վարդանայ<sup>(1)</sup>,  
Պարկեշտ մարդ մը եղի՛ր դուն.  
Ազգըդ քեզմով պարծենայ:

Ո՞վ հայ արդայ, քա՛ջ արդայ,  
Թոռնիկն ես մեծ Վարդանայ.  
Մեծ գիտուն մը եղի՛ր դուն.  
Հայրենիքիդ ռահվիրայ<sup>(2)</sup>:

Ո՞վ հայ արդայ, քա՛ջ արդայ,  
Թոռնիկն ես դուն Վարդանայ.  
Արի<sup>(3)</sup> զինուոր մ'եղի՛ր դուն,  
Որ Ազգը փառք ըստանայ:

Ո՞վ հայ արդայ, քա՛ջ արդայ —  
Թոռնիկն ես զին Վարդանայ.  
Մեծ առաքեալ<sup>(3)</sup> մ'եղի՛ր դուն,  
Ազգիդ հոգին բարձրանայ:

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ.** — Հայ տղա մը պէտք է իր խաջ նախահայրերուն օրինակին հետեւի, եւ շանայ օգտակար ըլլալ իր հայրենիին:

## ԲԱՑԱՐՈՒԹԻՒՆԵՐ

(1) **Քաջ Վարդան.** — Հայ զօրավար որ բրիստոնէական կրօնքին համար Պարսիկներուն նետ պատերազմեցաւ:

(2) **Առակիրայ.** — Առաջնորդ:

(3) **Արի.** — Քաջ:

(4) **Առաքեալ.** — Աստուծոյ կողմէ պկուած:

**ՃԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Քաջ Վարդան ծեր ինչն է: — Դուք անոր ինչն էք: — Քաջ Վարդանայ թուը ինչնպէս ըլլալու է: — Իր հայրենիքին համար ինչ ըլլալու է: — Ինչո՞ւ զինուոր պէտք է ըլլայ: — Ինչո՞ւ առաքեալ պէտք է ըլլայ:

## 19. ՎԱՐՍԱԿԻ ՀԱՏԻԿՆԵՐԸ

Մարկոս աղքար գործաւոր մըն էր որ սուրհանողակի<sup>(1)</sup> ձիերու ախոռի մը մօտ տնակ մը կը բնակէր:

Քիչ մը կառք վարել գիտնալուն՝ սուրհանդակապետը զայն քոյլիս առաւ:

Քանի մը շաբաթ անցնելէ ետքը, ախոռին մանչերը իրեն համար ըսին թէ վարսակ<sup>(2)</sup> կը գողնայ: Առջի իրիկունը, կրնակը մեծ պարկ<sup>(3)</sup> մը առած՝ գաղտուկ տուն մանելը տեսեր էին:

Սուրհանդակապետը անմիջապէս Մարկոսի տունը գնաց և ամէն կողմէ աչքէ անցուց, բայց հատ մը վարսակ չգտաւ:

Այն ատեն Մարկոս տէրոջը ըսաւ. «Զեր իրաւունքն

է, առէր, որ գողը փնտուէք, բայց քանի որ իմ անմեղ ըլլալս հասկցաք, կը պահանջեմ որ զիս զրապարտողները<sup>(4)</sup> պատժէք: »

Այս խօսքերը ըսած ատեն՝ անսանկ մը զարկաւ սեղանին, որ ամբողջ սենեակը երերաց, և քանի մը վարսակի հատեր ինկան սեղանին վրայ:

Մարկոս իր գողցած վարսակը այդ սենեակին առաստաղին մէջ պահեր էր: Մուկ մըն ալ զացեր ծակ մը բացեր էր առաստաղին<sup>(5)</sup> մէջ, և վարսակի հատիկները այդ ծակին վար կ'ինային:

Մարկոսին թեւերէն կապելով բանտ տարին զինքը, ուր մնաց երկար առեն:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Երբեք յանցանք մը զադենի յի մնար: Դադենի յանցանք գործողները or մը խայտառակ կ'ըլլան:

### ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Սուրհանդակ.** — Նամակ բերող տանող:


(2) **Վարսակ.** — Տեսակ մը բոյս, զոր ձիերը կ'ուտեն (Ես-Եսֆ):

(3) **Պարկ.** — Մեծ տոպրակ (Հս-Հսլ):

(4) **Զրապարտող.** — Մէկուն վրայ սուս յանցանք ձզող:

(5) **Սուսաւադ.** — Զեզուն:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Ո՞վ էր Մարկոս աղբար: — Սուրհանդակապետը ինչո՞ւ քովը առաւ զայն: — Ախոռին մանչերը ինչ ըսին իրեն համար: — Սուրհանդակապետը ինչ ըրաւ: — Վարսակ զոտաւ: — Ան ատեն Մարկոսը ինչ ըսաւ տէրոշը: — Այդ խօսքերը ըսած ատեն երբ ծեռքը սեղանին զարկաւ, ինչ պատահեցաւ: — Մարկոս ուր պահեր էր իր զողցած վարսակը: — Մուկը ինչ ըրեր էր: — Ի՞նչ ըրին Մարկոսին:



### 20. Թ Ո Ւ Ղ Թ Ը

Հարմա դժուար դաս մը ունի գրելիք:

Ուսուցիչը պատուիրած էր իրեն թերթ մը թուղթ առնել, աղէկ մը զիտել և ըսել թէ ինչ կը տեսնէ:

— Ա, կ'ըսէ Հարմա, այս թուղթը ճերմակ է. ուրիշ բան չեմ զիտեր որ ըսեմ. դուն բան մը զիտե՞ս, քուրի՞կ, կը հարյնէ Հերմինէին:

— Կրնաս ըսել թէ այդ թուղթին թերթը բարակ է, կը պատախանէ քոյրը:

— Ատկէ ի՞նչ կ'ելէ, կը յարէ<sup>(1)</sup> Հարմա, տեսնելով որ գործը պիտի երկարի:

— Ատկէ ան կ'ելէ որ, հաստ թուղթեր ալ կը գըտնուին. նայէ՛ սա բառզիրքիդ վրայի կողքը<sup>(2)</sup> որքան հաստ է:

— Աղէկ, ատ ալ գրենք. ուրիշ բան զիտե՞ս:

— Նայէ՛, ի՞նչ է պատճառը որ բառզիրքիդ բարակէջերը այնքան զիւրաւ կը դառնան առանց ծալլուելու:

— Ի՞նչ զիտնամ:

— Որովհետև թուղթը ճկուն(3) և զիմացկուն է:

— Դիմացկուն ըսի՞ր. կեցիր որ ցուցնեմ քեզի թէ որչափ զիմացկուն է, գոչեց Հարմա, և թերթը պատռեց. բայց Հերմինէ պատռած թերթը առաւ և ուշադրութեամբ վրան նայեցաւ:

— Նայէ՛, ըսաւ պահիկ մը ետքը, պատռուածքին ծայրը շատ բարակ թեկեր կ'երեւան. ի՞նչ են ասոնք:

— Վայ, իրաւ, գոչեց Հարմա որ սկսեր էր շահագրգութիլ(4). ասոնք այն քուրջերուն թեկերը ըլլալու են որոնցմով թուղթը կը շնուրի:

— Հաւանական(5) է:

— Հիմակ ես քեզի հարցնեմ, ըսաւ Հարմա, նայիմ կրնա՞ս ինձի ըսել. ի՞նչո՞ւ համար թուղթին վրայ գրելը զիւրին է և լաթին վրայ՝ գմուար:

Հերմինէ այնպէս կը ձեւացնէ թէ չի կրնար պատասխանել: Հարմա յաղթապանձ(6) կ'աղաղակէ:

— Որովհետև թուղթը ողորկ(7) է:

Եւ քիչ մը խորհելէ յետոյ, հառաչանք մը արձակելով կը յարէ.

— Եւ շատ աժան է. այդ պատճառաւ շատ թուղթ մրոտել կու տան մեզի:

Այն ատեն Հարմա զրիչը ձեռք կ'առնէ և իր դասը կը գրէ.

«Սա թուղթին թերթը ճերմակ և ողորկ է: Նաև բարակ, ճկուն և զիմացկուն է: Թուղթը քուրջերէ կը շնուրի և շատ աժան կը ծախուի:»

Հարմա յետոյ պիտի սորվի թէ վայտէ և յարդէ ալ թուղթ կը շնուրի:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Յարեց. — Ըսաւ:

(2) Խողք. — Դիրքին վրայի կափարիչը:

(3) Ճկուն. — Կակուլ:

(4) Շահագրգութիլ. — Բան մը հասկնալու փափաքիլ:

(5) Հաւանական է. — Կարելի է:

(6) Յաղթապանձ. — Յաղթողի ձեւով:

(7) Ողորկ. — Վրան շիտակ:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Հարմային զրելիք դասը ի՞նչ էր: — Հարմա թուղթը զիւրելով ի՞նչ կը տեսնէ: — Քոյրը ի՞նչ կ'ըսէ: — Թուղթին մկուն եւ զիմացկուն ըլլալը ի՞նչն կը ճասկնայ Հերմինէ: — Հարմա երը թուղթը կը պատռէ, ի՞նչ կը տեսնէ: — Ի՞նչ են այդ թեկերը: — Հարմա ի՞նչ կը հարցնէ իր քորջը: — Քոյրը կրնայ պատասխանել: — Ո՞գ կը գտնէ այդ հարցումին պատասխանը: — Ուրիշ ի՞նչէ կը շինուի թուղթը:



### 21. ԹԻԹԵՌՆԻԿԸ ԵՒ ԿԱԿԱՁԸ

Կակաջի(1) մը վըրայ կարմիր՝ կը թառի(2) թիթեռնիկ(3) մը թեւկիներով իր քնքուշ(4):

«Ուրկէ՞ առիր կ'ըսէ բուրումդ(5) այդ անուշ  
Որ աղուսորիկ շափրակներէդ(6) կը թըռի : »  
Կակաջն ըսաւ . «Բախտն ինծի  
Վարդ մը տըւաւ զըրացի : »  
Ազնիւ ու բարի բլալու համար  
Ընտրե՞նք ընկերներ միշտ քաղաքավար :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ .** — Միշտ ջանա՛ բարի տղոց հետ ընկերանալ , որպես զի դուն ալ անոնց նմանիս :

#### ԲՍՑՈՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Կակաջն . — Կարմիր ժաղիկ մը որ հոտ չունի (ՀՅԱԼ) :
- (2) Կը բառի . — Կը կենայ:
- (3) Թերեռնիկ . — Գեղեցիկ թեւերով թռչող միջատ մը (+ԵՔԵՆՔ) :
- (4) Քննոււ . — Փափուկ:
- (5) Բուրում . — Հոտ:
- (6) Շափրակ . — Ծաղիկին թերթերը :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ .** — Կակաջնին վրայ ՞՞վ կը թառի : — Ինչ՞ու թիթեռնիկը ծաղիկներուն վրայ կը թառի : — Ի՞նչ կ'ըսէ թիթեռնիկը կակաջնին : — Կակաջը ի՞նչ պատասխան կուտայ : — Ազնիւ ու բարի ըլլալու համար ի՞նչ պէտք է ընել :



#### **22. ԽՂՃՄՏԱՆՔԻ ԶԱՅՆԸ**

Իրիկուն մը , գպրոցէն դարձին , փոքրիկ Արմինէն ճամրուն վրայէն խաւաքարտէ(1) տուփ մը գտաւ : Հետաքրքրութեամբ(3) բացաւ տեսնելու համար թէ մէջը ի՞նչ կար :

Այդ տուփին մէջ լեցուն աղուսոր բաներ կային . գոյնզգոյն(3) գերձաններ , ծրաբներով ասեղներ , փայլուն մատնոցներ , ժանեակներ(4) և կապոյտ , վարդագոյն ժապաւէններ(5) կանգուններով :

Արմինէ շատ եռանդով այդ ամէնը աչքէ անցուց , յետոյ հառաջանք մը արձակեց , կարձես ըսել ուղելով . «Մէ՛ղք որ այս բաները իմս չեն : Մայրիկս , որ աղքատ է , սա մատնոցները , գերձանները , ասեղները տարիներ-

բով պիտի գործածէր, և ես ուզածիս չափ կապոյտ ու վարդագոյն ժամաւէններ պիտի կապէի մաղերուս :»

Սակայն առանց բնաւ վարանելու<sup>(6)</sup>, աղջնակը տուշը թեխն տակ առաւ, և դպրոցին ճամբան բռնեց, ուրկէ արդէն շատ հեռացեր էր :

«Տիկի՞ն, ըսաւ իր վարժուհիին, տեսէ՞ք սա տուփը գտայ փողոցէն. աղուոր բաներով լեցուն է. անմիշապէս ձեզի բերի, որպէս զի զայն կորսնցնողին տաք, եթէ գայ ուղէ : — Շատ աղէկ ըսաւ վարժուհին, համբուրեկով Արմինէն յայտնելու համար անոր իր գոհունակութիւնը : Հսէ՞ նայիմ, աղջիկս, ո՞վ քեզի խրատ տուաւ որ այս տուփը քովկ չպահես : — Սա տեղէս եկող ձայն մը, պատսասիսանեց Արմինէն ձեռքը սրախն վրայ դնելով, այն ձայնը որուն վրայ կը խօսիք մեզի շատ անգամ : Եթբ տուփը գտայ, այդ ձայնը կը կրկնէր ինծի : «Յիշէ՞, յիշէ՞» եւ մտիկ ըրի իրեն :

Երկու օր ետքը, տուփը տէրոջը արուեցաւ. փոքրիկ կառքով մը գիւղէ գիւղ պտըտող փերեղակ<sup>(7)</sup> մը կորսնցուցեր էր զայն : Սյդ մարդը ուզեց վեհանձնորէն<sup>(8)</sup> վարձատրեկ<sup>(9)</sup> Արմինէն իր ուղղամտութեան համար, բայց փոքրիկ աղջիկը տասը վարանոց զրիչ մը միայն ընդունեցաւ :

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ . — Ուղղամիտ մարդը միշտ կը վարձարուի :**

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>(1)</sup> Խաւաբարտ. — Շատ հաստ և կարծր թուղթ (Տառեւլու) :

<sup>(2)</sup> Հետաքրքրութեամբ. — Ամէն բան հասկնալու փափաքով :

<sup>(3)</sup> Գոյնզգոյն. — Տարբեր գոյնով :

<sup>(4)</sup> Փանետակ. — Դերձանով կամ մետաքսով շինուած ծակ ծակ հիւսուածք (Քառեւլու) :

<sup>(5)</sup> Փապտւէն. — Մետաքսէ շերտ (+Քառեւլու) :

<sup>(6)</sup> Վարանելու. — Տարակուսելու :

<sup>(7)</sup> Փերեզակ. — Մանրավաճառ :

<sup>(8)</sup> Անհանձնութեամբ. — Առատութեամբ :

<sup>(9)</sup> Վարձատրեկ. — Փոխարինութիւն լնել :

ՀԱՐՅՈՒՄԱՆԵՐ. — Արմինէն ինչ զտաւ ճամբուն վրայէն : Ինչու բացաւ տուփիր : — Ի՞նչ կար տուփին մէջ : — Արմինէն ինչու հառաչեց : — Արմինէն տուփիր ինչ ըրաւ : — Ի՞նչ ըսաւ իր վարժուհիին : — Վարժուհին ինչ հարցուց անոր : — Ի՞նչ պատասխանեց Արմինէն : — Տուփը որու տուփին : — Ո՞վ էր այդ տուփին տէրը : — Տուփին տէրը ինչ ըրաւ Արմինէն :

## 23. ԱԼԿԵՈՆԻՆ<sup>(1)</sup> ԲՈՅՆԸ

Օգոստոս ամսուան մէջ գիշեր մը, սև ամպեր արագ արագ հորիզոնէն վեր կը բարձրանային . հովը սկսեր էր քչել . փալլակները կը շողային<sup>(2)</sup>, և հեռուէն կը լսուէր որոտումին խուլ գոսումը :

Լուսիկ աճապարանքով<sup>(3)</sup> իր ծաղկամանները ներս կ'առնէր :

Յանկարծ փոթորիկը պայմեցաւ<sup>(4)</sup> ուժգին<sup>(5)</sup> :

Փոքրիկ աղջիկը սարսափած փախաւ, պոռալով .

— Մայրիկ, մայրիկ, ո՞ւր ես :

— Հոս եմ, զաւակս . ի՞նչ կայ :

— Տեսա՞ր սա սարսափելի փայլակը որ կրակէ օձի կը նմանէր : Լսեցի՞ր որոտումին սոսկալի ձայնը : Ո՞հ, որքա՞ն կը վախնամ . բոլոր անդամներս կը գողան կօր :


— «Հանդարտէ՝, սիրեկի աղջիկս, քովս եկո՞ւր : Երբոր երկինք կ'որոտայ, պէտք է խորհիլ թէ շատ հաղ-

ուաղէպ է<sup>(6)</sup> որ կայծակէն աղէտք<sup>(7)</sup> մը յառաջ գայ: Տե՛ս, աղջիկս, ես մինչև այս տարիքս, երբեք այդ տեսակ արկածի<sup>(8)</sup> մը ականատես չեմ եղած<sup>(9)</sup>: Եւ յետոյ,

ի՞նչ օգուտ ունի վախնալը. եթէ աղէտք մը պիտի պատահի, քու վախնալովդ չես կրնար անոր առաջքը առնել:

«Մար'կ ըրէ.

«Աղիենն անունով թըստ չուն մը կայ, որ իր բոյնը ծովուն եղերքը կը շինէ, ժայռերուն մամուռին<sup>(10)</sup>



մէջտեղը: Այս բոյնը փոքրիկ ծակ մը ունի երկինքին կողմը: Թուխար<sup>(11)</sup> հոնկէ չունչ կ'առնէ:

«Փոթորիկն ատեն ծովը կ'ալեկոծի, ջուրը կը բարձրանայ, հովը կը փչէ մոլեզին<sup>(12)</sup> և բոյնը կը ցնցէ<sup>(13)</sup>: Սակայն, մայրը հանդարտ կը քնանայ առանց վախնալու

որ իր ձագերուն վասս մը կը համնի, որովհետեւ շատ հազուաղէպ է որ ալեկոծ ծովը թուխար կուլ տայ<sup>(14)</sup>:

«Մենք ալ ալկէոնին պէս ըլլա՛ք, սիրելի՛ պզտիկ աղջիկս, և երբե՛ք մեր յոյսը չկտրեն՛ք նախախնամութենէն՝ կեանքի ցաւերուն, տրտմութիւններուն և փոթորիկներուն միջոցին:»

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Մարդ ինչ դժբախտութեանց աղիանդիպի, պէս յէ յուահափի, որովհետեւ Աստուած կ'ողումի աւելն անոնց որ իրեն կը դիմեն հաւասփոյ:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

(1) **Ալկեն.** — Ծովային թռչուն մը:

(2) **Կը ըողային.** — Կը փայլէին:

(3) **Անապարանեով.** — Փութով, շուտով:

(4) **Պայրեցաւ.** — Հոս կը նշանակէ՝ մէջտեղ ելաւ:

(5) **Ուժզին.** — Ուժով:

(6) **Հազուաղէպ է.** — Շատ քիչ կը պատահի:

(7) **Աղէտք.** — Մ'ծ գժբախտութիւն:

(8) **Արկած.** — Դժբախտ պատահար:

(9) **Ականատես չեմ եղած.** — Աչքովս չեմ տեսած:

(10) **Մամուռ.** — Քարերու վրայ բուսնող խոտ մը (Էսուռ-ն):

(11) **Թուխար.** — Հաւերուն և թռչուններուն նոր ծնած ձագերը:

(12) **Մոլեզին.** — Կասդած:

(13) **Ցնցել.** — Ուժով երեցնել:

(14) **Կուլ տալ.** — Կլել:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Գիշեր մը ինչ պատահեցաւ: — Լուսիկ ինչ ըրաւ: — Ի՞նչ ըսաւ իր մօրը: — Մայրը ինչ պատախանեց իր աղջիկանը: — Շատ անզամ կայծակէն աղէտք յառաջ կու զայ: — Վախնալը օգուտ ունի: — Ալկէոնը ուր կը շինէ իր բոյնը: — Թուխար ուրկէ շունչ կ'առնէ: — Երբ փոթորիկ ըլլայ, մայրը կը վախնայ:



## 24. Ա Զ Ա Տ ՈՒ Թ Ի Ւ Ն

— Փոքրիկ թռչուն, ըսաւ տղան,  
Նայէ աղուոր սա վանդակիս<sup>(1)</sup>,  
Քեզի համար հիւսեցի զայն  
Ոսկի թելով որ մէջն ապրիս:  
  
Գորգըգ<sup>(2)</sup> ծաղիկ, խշտեակղ<sup>(3)</sup> է լոռ<sup>(4)</sup>.  
Քեզի կորեկ<sup>(5)</sup>, թռվ ու խաղող  
Պատրաստած եմ աղուոր աղուոր.  
Եկո՛ւր այսաեղ, ոստերըդ թ՛ղ՝

Թռչունն ըսաւ. — Փո՛քր աղջբնակ<sup>,</sup>,  
Քու վանդակէդ ձոխ<sup>(6)</sup> ու փարթամ<sup>(7)</sup>

Կը նախընտրեմ<sup>(8)</sup> ծառն ու ծըմակ<sup>(9)</sup> .  
Ոչ թռվ կ'ուզեմ, ոչ համադամ<sup>(10)</sup> .

Քու պալատիզ<sup>(11)</sup> մէջ ծիածանն<sup>(12)</sup>  
Դուն բանտարկել կ'ուզես զիս զատ,  
Բայց կեանքն անկախ՝ կեանք է միայն .  
Սպրիլ կ'ուզեմ ես հոս ազատ :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Աւելի աղեկ և աղիաս ըլլալ եւ ա-  
զաս, յան թէ հարուս եւ գերի :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Վանդակ.** — Թելերով կամ փայտիկներով շինուած ծակ ծակ  
փոքրիկ շէնք մը ուր թռչունները կը պահեն :
- (2) **Գորգ.** — Գետինը փոելիք կապերտ (հաւաք):
- (3) **Խօսեակ.** — Անկողին:
- (4) **Լոռ.** — Մամուռ:
- (5) **Կորեկ.** — Թռչունի ուտելիք:
- (6) **Ճոխ.** — Հարուստ:
- (7) **Փարքամ.** — Հարուստ:
- (8) **Կը նախընտրեմ.** — Աւելի կը սիրեմ:
- (9) **Ծմակ.** — Անտառ:
- (10) **Համադամ.** — Աղուոր ուտելիքներ:
- (11) **Պալատ.** — Թազաւորի բնակարան:
- (12) **Ծիածան.** — Գոյնզգոյն:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Տղան ինչ ըսաւ թռչունին: — Տղան ինչ ու-  
տելիք պատրաստեր էր թռչունին: — Թռչունը ինչ պատախան  
տուաւ տղուն: — Ինչու թռչունը չէր ուզեր այդ զեղեցիկ վանդա-  
կին մէջ ապրիս:

## 25. ՄԱՏՆՈՅՑԸ

Մեծահարուստ<sup>(1)</sup> այրի տիկնոջ մը մէկ հատիկ աղջիկը կիւանդացաւ ու մեռաւ :

Երկար տարիներ խեղճ կինը լացաւ ողբաց իր աղջիկան վրայ զոր հոգիին պէս կը սիրէր :

Բնաւ մօտաւոր աղքական մը չունէր . որո՞ւ պիտի ձգէր իր մեծ հարստութիւնը :

Խորհեցաւ որ իր գիւղին մէջէն աղքատ աղջիկ մը քովը առնէ , մեծցնէ , կրթէ զայն , և բոլոր ունեցածը անոր թողու :

Բայց գիւրին բան չէր գտնիլ այնպիսի աղջիկ մը որ արժանի ըլլար իր բարիքներուն

Ուստի միջոց մը խորհեցաւ :

Օր մը իր տունը հրաւիրեց գիւղին բոլոր այն աղջիկները որոնց մասին ամէն մարդ գովեստով կը խօսէր :

Մեծ հանդէս մը տուաւ . պար , երգ , տեսակ տեսակ խաղեր , ամէն տեսակ զուարձութիւն կար . և վերջն ալ վիճակահանութիւն մը տեղի ունեցաւ զանազան պարզեներով<sup>(2)</sup> , ինչպէս գոհարներ<sup>(3)</sup> , աղուոր կերպասներ , զմայլելի հովահարներ , նկարներ<sup>(4)</sup> պարունակող գիրքեր , և շատ մըն ալ պակաս արժէք ունեցող տուարկաներ՝ սակայն ամէնքն ալ սիրուն և հաճելի :

Ամէն աղջիկ կ'երթար թիւ մը կը քաշէր պղափկ շագոյրի<sup>(5)</sup> մը մէջէն . եթէ իր թիւը շահէր , գտնուած առարկաներուն մէջէն ուզածը ընտրելու<sup>(6)</sup> իրաւունքը կ'ունենար : Տան տիկինը դրան մը վարագոյրին ետին նստած , գաղտուակ կը գիտէր այս տեսարանը եւ ուշադրութիւն կ'ընէր թէ ամէն ոք<sup>(7)</sup> ինչ պիտի ընտրէր :

Գիտէք այդ բոլոր աղջիկներուն ո՛քը ընտրեց ինքը . այն աղջի՛կը որ այդքան թանկագին<sup>(8)</sup> առարկաներուն մէջէն մատնոց մը առեր էր մատին վրայ փորձելէ յետոյ . վասն դի այդ ընտրութիւնը ցոյց կուտար թէ համեստ , աշխատասէր և լուրջ<sup>(9)</sup> էր :

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ .** — Աշխատասէր տղան ամենուն սիրելի է , եւ ան է որ կը փառատրուի :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **ՄԵծահարուս.** — Շատ հարուստ :

(2) **Պարզեւ.** — Նուէր :

(3) **Գոհար.** — Շատ տաղ և զեղեցիկ քար :

(4) **Նկար.** — Գոնաւոր պատկեր :

(5) **Շագոյր.** — Պայուսակ :

(6) **Ընտրել.** — Բանի մը հաւնելով ուրիշներէն զատել :

(7) **Ս.մէն ոք.** — Ամէն մէկը :

(8) **Թանկագին.** — Սուզ :

(9) **Լուրջ.** — Խելքը զլուխը :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ .** — Մեծահարուստ տիկնոջ աղջիկը ինչ եղաւ : Տիկինը որո՞ւ ուզեց ծգել իր հարստութիւնը : Ի՞նչ միջոց խորհեցաւ արժանաւոր աղջիկ մը զտնելու համար : Վիճակահանութեան մէջ ինչ պարզեւներ կային : Ամէն աղջիկ ինչ կը քաշէր շագոյրին մէջէն : Տիկինը ինչ կ'ընէր : Տիկինին հաւնած աղջիկը ինչ պարզեւ : Ենչու տիկինը այդ աղջկան հաւնեցաւ :



## 26. ԼԵՒՈՆ ՎԵՐՁԻՆ

Հայոց վերջին թագաւորը կը կոչուի Լեւոն Լուսինս-  
եան, որ քաջ և առաքինի<sup>(1)</sup> մարդ մըն էր :

Թագաւոր ըլլալէն ետքը, տասը տարի շարունակ  
պատերազմնացաւ թշնամիներու դէմ, որոնք վերջապէս  
պաշարեցին զինքը իր զինուորներուն հետ Կապանի բեր-  
դին<sup>(2)</sup> մէջ :

Այն տեղ անօթի մնալով, ամէնքը ստիպուեցան կա-  
տուի և էջու միա ուտել. յետոյ բոլորովին սովլ<sup>(3)</sup> տիրեց,  
և Հայոց թագաւորք անձնատուր<sup>(4)</sup> եղաւ ու գերի բռու-  
նուեցաւ. իրեն հետ գերի բռնուեցան նաև իր կինը՝  
Մարիամ թագուհին և իր աղջիկը՝ Ֆիմի:

Սատնք ամէնքը մէկուել Եղիպատոս տարուեցան ուր  
մնացին եօթը տարի:

Երբ ազատ թողուեցան, Լեւոն թագաւորը իր կնոջը  
և աղջկանը հետ ուխտի գնաց Երուսաղէմ: Հոն Մարիամ  
և Ֆիմի Ս. Յակոբայ վանքը մտան, ուր ապրեցան մին-  
չեւ իրենց կեանքին վերջը:

Իսկ Լեւոն գնաց Երոսովա, ուր թագաւորներ հիւրըն-  
կալեցին<sup>(5)</sup> զինքը:

1393ին մնուաւ Հայոց վերջին թագաւորը Բարիկի  
մէջ: Սէս-Տընի եկեղեցին մէջ ցարդ կը մնայ իր գե-  
րեզմանը, որուն վրայ կ'երեւայ իր արձանը պառկած,  
իր արքայական նշաններով, ծիրանի<sup>(6)</sup> հազած, դուխը  
թագով պսակուած, ձեռքը մական<sup>(7)</sup> լոռնած և ոտքե-  
րուն տակ երկու առիւծ պառկած:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>(1)</sup> Առաքինի. — Բարի և պարկեշտ:

<sup>(2)</sup> Բերդ. — Բարձր պատերով շէնք մը:

<sup>(3)</sup> Սովլ. — Ռւսելիք չգտնուիլը:

<sup>(4)</sup> Անձնատուր եղաւ. — Ինքզինքը թշնամին ձեռքը յանձնեց:

<sup>(5)</sup> Հիւրընկալեցին. — Ընդունեցին:

<sup>(6)</sup> Ծիրանի. — Թագաւորներու յատուկ կարմիր վերարկու:

<sup>(7)</sup> Մական. — Թագաւորական գաւազան:

ՃԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞վ է Հայոց վերջին թագաւորը! — Ի՞նչպէս  
մարդ էր! — Թագաւոր ըլլալէն ետքը ինչ ըրաւ, — Թշնամիները ի՞նչ  
ըրին իրեն: — Այստեղ ինչ պատահեցաւ, — Ինչու անձնատուր եղաւ  
թշնամին: — Գերի բռնուելէն ետքը ուր տարուեցաւ: — Ո՞վ կար  
իրեն հետո! — Ո՞չչափ ատեն Եգիպտոս մնաց: — Երբ ազատ թող-  
ուեցան ուր գացին: — Մարիամ եւ Ֆիմի ուր ապրեցան անկէ ետքը  
եւ ուր մեռան: — Լեւոն թագաւորը ուր գնաց: — Ո՞ւր մեռաւ: —  
Ո՞ւր թաղուեցաւ:

## 27. ԱՆՈՒՈՐ ԱՍՏՂԻԿԻՆ

Աղուոր աստղիկ դուն ոսկեգէս<sup>(1)</sup>  
 Որ երկինքին մէջ կ'ապրիս,  
 Ծաղիկ մըն ես, կանթեղ մըն ես,  
 Որ լոյսովըդ կ'այրես զիս:  
 Ախ, անդամ մը իջի՛ր դուն վար  
 Այդ ամճկերուն լեռներէն,  
 Մօտէն տեսնեմ լոյսըդ վառ վառ<sup>(2)</sup>,  
 Եւ կը թողում քեզ նորէն:  
 Կամ երկնցուր ինձ լուսափայլ<sup>(3)</sup>  
 Ենարան<sup>(4)</sup> մը արծաթէ,  
 Որ մօտենամ քեզ քայլ առ քայլ  
 Լոյսըդ սրտիս մէջ ծաթէ<sup>(5)</sup>։  
 Կամ ինձի տուր, փոքրիկ արեւ,  
 Մեծ թոշունի զոյգ<sup>(6)</sup> թեւեր  
 Փետուրի պէս թեթեւ թեթեւ,  
 Որ անոնցմով թոչիմ վեր։

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

(1) Ոսկեգէս. — Ոսկիի զոյն պոչով։

(2) Վառ վառ. — Փայլուն։

(3) Լուսափայլ. — Լոյսով փայլուն։

(4) Ելնարան. — Շարժող սանդուխ։

(5) Չարել. — Փայլիլ։

(6) Զոյգ. — Երկու հատ։

ՃԱՐՅՈՒՄՆԵՐ. — Ինչու տղան աստղիկին ոսկեգէս «կ'ըսէ»՝  
 — Ինչու «ծաղիկ ես» կ'ըսէ»՝ Ի՞նչ ըսել է ամպերուն լեռներէն։  
 — Տղան ինչու կ'ուզէ որ աստղիկը ենարան մը երկնցնէ վար։ —  
 Ինչու թոշունի թեւեր կ'ուզէ ունենալ։

## 28. ԾԱՂՐԱՆՔԻՆ ՊԱՏԻԺԸ

Ամառուան մէջ, կիրակի առտու մը, ողնին<sup>(1)</sup> դաշտ-  
 աբրը պարտելու գնաց, մինչ իր կինը, տնակին մէջ, ցո-  
 րեկուան կիրակուրը կը պատրաստէր։

Մացառի մը մօտ նապաստակ մը ելաւ դիմացը, ու  
 հարցուց իրեն։

— Ի՞նչպէս եղեր է որ ասանկ գեղեցիկ առտու մը  
 դաշտ ելեր ես։

— Պարտելու ելայ, պատասխանեց ողնին։

Պարտելու, ըսաւ նապաստակը ինդալով. այդ ծուռ  
 սրունքներով ի՞նչ աղուոր պտոյտ կ'ըլլայ։

Սյս խօսքը ողնին ջլուերուն դպաւ, եւ ինքինքն ելլեռով պոռաց։

— Կը կարծես թէ քու սրունքներդ իմիններէս աղէ՛կ են։

— Ատիկա տարակոյս չի վերցներ։

— Կը սխալիս, գոչեց ողնին. գրաւ կը դնեմ որ ես,  
 քեզմէ շուտ կը վազեմ։

— Այդ ծուռ սրունքներով վդ. խենդ ես, ինչ ես պա-  
 տասխանեց նապաստակը. բայց փորձե՞նք, եթէ կ'ուզես։

Ի՞նչ գրաւ դնենք։

— Շիշ մը գինի և օխա մը ստեպղին<sup>(2)</sup>։

— Շատ աղէկ, օ՛ն սկսինք։

— Ո՛չ, առարկեց ողնին. ես այս առտու գեռ բան մը  
 չեմ կիրեր. հոս սպասէ. տուն երթամ, պատառ մը բան  
 ուտեմ. կէս ժամէն կուզամ։

Նապաստակը հաւանեցաւ, և վշուա կենդանին շիտակ  
 տուն վազեց, միտքը գնելով որ աղուոր խաղ մը խաղայ  
 անգութ անսառունին որ զինքը ծաղրեր էր։

— Կնի՛կ, ըստու, չուտ հետա զաշտ եկուր : Նապատաշակի մը հետ վիշ մը գինի և օխայ մը ստեղլին գրաւ դրի պնդելով որ ես իրմէ աղէկ կը վաղեմ :

— Խենդեցա՞ր, ի՞նչ եղար, ըստ խեղճ կնիկը դող եղելով . դուն նապաստակին հետ կրնա՞ս մրցիլ :

— Ատ իմ գիտնալիք բանս է . դուն իմ գործիս մի՛ խառնուիր, միայն հնազանդէ :

Կինը անմիջապէս ճամբայ ելաւ, և ամուսինը հետեւ եալ հրահանգները<sup>(3)</sup> տուաւ անոր .

— Աղէկ մափկ ըրէ . սա մեծ զաշտին մէջ պիտի վազենք . նապաստակը մէկ կողմէն, և եռ՝ միւս կողմէն : Դուն այստեղ պահուըտէ, և երբ նապաստակը մօտենայ, երեւան ելիր ու ըսէ՛ . «Ես քեզմէ առաջ հասայ :»

Յետոյ կնոջը ցոյց տուաւ պահուըտելիք տեղը, և ինք հոռացաւ :

Նապաստակը որ իրեն կ'սպասէր, «Մէկ, երկու, երեք» գոչեց, ու նետի պէս մեկնեցաւ : Ոզնին մէկ քանի քաղ առաւ միայն, յետոյ փոսի մը մէջ պահուըտեցաւ :

Երբ նապաստակը դաշտին ծայրը հասաւ, ոզնին կինը երեւան եղելով գոչեց . «Ես քեզմէ առաջ հասայ :»

Արագաքայլ<sup>(4)</sup> կենդանին ապշած(5) մնաց, որովհետեւ երկու ոզնիները ձիշտ իրարու կը նմանէին, ու ստիպուեցաւ վճարել վիշ մը գինին և օխայ մը ստեղլինը, որուն ջուրովը աղուորիկ ապուր մը եփեց ոզնին կինը իրիկուան ճաշին համար :

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ . — Պիտի յէ երթել ծաղրել ուրիշները, որովհետեւ ծաղրողը շատ անզամ ծաղրանի առարկայ կ'ըլլայ :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Ազնի . — կենդանի մը որուն մարմինը ամբողջ փուշերով ծածկուած է :

(2) Սեեպդին . — կարմիր պտուղ մը (հաւատուած) :

(3) Հրահանգ . — Պատուէր :

(4) Արագաքայլ . — Շուտ քալող :

(5) Ապած . — Շփոթած, շուարած :

ՃԱՐՑՈՒՄՆԵՐ . — Ոզնին դիմացը նվելաւ : — Նապաստակը ինչ հարցուց ոզնիին : — Ի՞նչ պատասխանեց ոզնին : — Նապաստակը ինչ ըստ անոր : — Ոզնին ինչ բանի գրաւ դրաւ : — Թետոյ ոզնին նւր գնաց : — Ոզնին ինչ ըստ իր կնկանը : — Կինը ինչ ըրաւ : — Ոզնին ինչ հրահանգ տուաւ իր կնկանը : — Նապաստակը ինչ ըրաւ : — Ոզնին ինչ ըրաւ : — Ոզնիին կինը ինչ ըրաւ : — Քրաւը նվշանացաւ : — Ո՞վ վճարեց շիշ մը գինին եւ ստեղլինը :

### 29. ԳԱՄԵՐԸ


Հարմային գրապանները միշտ լեցուն են . ամէն տեսակ բան կայ մէջը, գնդակներ, դանակ մը, հող<sup>(1)</sup> մը, առասան<sup>(2)</sup>, և գեռ ուրիշ բաներ :

Այսօր նոր տեսակ մըն ալ աւելցած է, երեք հատ գամ, նոր նոր աղուոր :

Ասոնք իր աջ ձեռքը բռներ է որ գրպանը չծակի : Մերթ ընդ մերթ<sup>(3)</sup> անոնց վրայ կը նայի և կ'ուրախանայ : Ի՞նչ փայլուն են, և ի՞նչ սուր է ծայրերնին, ի՞նչ աղուոր տափակ գլուխներ ունին :

— Ասոնք արծաթ են, չէ՞ , ըստ Հարմա իր քրոջը : Հերմինէ խնդաց իր եղբօրը միամտութեանը վրայ :

— Ո՞չ, Հարմա՛, ըստու, արծաթէ գամ չի շնուրիր : Արծաթը կակուղ է և դիւրաւ կը ծոփի : Արծաթէ գամը



Հի կրնար կարծր<sup>(4)</sup> փայտի մը մէջ մոնել : Յետոյ գամերը պէտք է աժան ըլլան , և արծաթը սուղ է :

— Ուրեմն ի՞նչ են , հարցուց Հարմա , շատ ցաւելով իր գամերուն արծաթ չըլլալը իմանալով :

— Երկաթ են , պատասխանեց Հերմինէ :

Երկաթ են մի՞ , պոռաց Հարմա , ի՞նչ կ'ըսես , ասանկ փայլուն երկաթ տեսած ունի՞ս :

— Երբ երկաթը ժանդուս կամ ներկուած չէ , փայլուն կ'ըլլայ . նայէ՛ մայրիկին բանալիները :

Հարմային սիրաը կոտրեցաւ :

Բայց հիմայ որ զիտէ թէ կը ժանդուսին , կ'ուղէ զիտնալ նաև թէ ինչպէս կը ժանդուսին :

— Գամերդ ինձի տո՛ւր , կ'ըսէ քոյրը , զանոնք ջուրով թրջեմ և պատուհանին առջեւ դնեմ . վաղը առտու ժանդուսած պիտի ըլլան :

Հարմա գամին մէկը միայն կուտայ . մէկ հատը կը բաւէ , եթէ անիկա ժանդուսելով աւրուի , դոնէ միւս երկուքը փայլուն կը մնան :

Հետեւեալ առտուն , անկողնէն ելածին պէս Հարմա պատուհանը կը վազէ , կը բանայ : Ի՞նչ տեսնէ , գամին վրայ շատ մը կարմիր արատներ<sup>(5)</sup> կան :

— Ճանգը աս է , ըստ քոյրը , եթէ աւելի երկար ատեն դուրսը ձգես , գամդ բոլորովին ժանդ պիտի գառնար : Երկաթը խոնաւութեան չի դիմանար : Ասոր համար է որ կը ներկեն զայն երբ հարկ ըլլայ բաց օդին ու անձրեւին մէջ թողուլ :

### ԲԱՑԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Հոլ . — Խաղալիկ մը որ իր վրայ կը դառնայ :

(2) Առասան . — Բարակ չուան :

(3) Մերք ընդ մերք . — Երբեմն :

(4) Կարծր . — Չժռող (սերբ) :

(5) Սրա . — Բիծ (լէ+է) :

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ . — Հարմային զրպանը ի՞նչ կը գտնուի միշտու — Ի՞նչպէս են այդ զամերը : — Հարմա մինչ կը հարցնէ քրոջը : — Հերմինէ ի՞նչ կը պատասխանէ : — Գամերը ի՞նչպէս կը ժանդուսին : — Ի՞նչու համար բաց օդին ծգուելիք զամերը կը ներկեն :



### 30. ՆԱՊԱՍՏԱԿԸ

Այգպէս ինկած դաշտ անտառ,  
Ո՞ւր կը վազես անդազար,  
Ո՞վ նապաստակ աղուորիկ.  
Հերի՛ք վազես, ա՛լ հերիք:

Ականջներդ անկած վեր,  
Կ'անցնիս լեռներ ու սարեր<sup>(1)</sup>.  
Անօթի ես, ծարա՞ւ ես  
Որ կը թռիս հովի պէս:

Ի՞նչ որ կ'ուզես քեզ կուտամ,  
Կերակուրներ համադամ<sup>(2)</sup>:  
Շաքա՞ր կ'ուզես թէ պիտակ<sup>(3)</sup>,  
Ո՞վ անուշիկ նապաստակ:

Թո՛ղ դաշտերը լայնածիր<sup>(4)</sup>.  
Քիչ մը քովը մօտեցի՛ր  
Իմ թեւերըս, զիրկս ու ծոց  
Բլլա՛ն քեզի օրօրոց:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻՆ. — Նապաստակը չորքոտանի սիրուն կենդանի մըն է որ աշխարհի ամէն կողմը կը գըտնուի: Կը մնանի<sup>(5)</sup> արմատներ, խոտեր, տերեւներ, պտուղներ և հունտեր կրծելով: Նապաստակները ցորեկները իրենց որջէն<sup>(6)</sup> դուրս չեն եղեր շատ վախկոտ ըլլահնուն պատճառաւ, և միայն գիշերները ուտելիք գըտնելու կ'ելլեն, և լուսնին լուսովը կը պարտին իրարուետեւէ վազվուտելով: Այս կենդանիները շատ կը քնանան միշտ աչքերնին բաց, այնքան սուր ականջ ունին, որ տերեւի մը շարժիլը լսելով կ'արթնան: Իրենց առջեւի թաթերը ետեւի թաթերէն կարճ ըլլալուն շատ աւելի դիւրութեամբ վեր կ'ելլին լեռներէն, քան թէ կ'իջնեն, և շատ արագընթաց<sup>(7)</sup> են: Եօթը կամ ութը տարի միայն կրնան ապրիլ: Առանձին կը բնակին և ձայն ձուն չեն հաներ մինչև որ մէկը չնեղէ զիրենք:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Սար. — Լերան զլուխը:

(2) Համադամ. — Համով եփուած:

(3) Պիտակ. — Պտուզ մը (չըսուց):


(4) Լայնածիր. — Լայն:

(5) Կը սնանի. — Կը կերակրուին:

(6) Որջ. — Անսունի բնակարտն:

(7) Սրագընթաց. — Շուտ բալող:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Նապաստակը ինչպէս կենդանի է: Ո՞ւր կը գտնուի: — Ինչով կը սնանի: — Յօրը դուրս կ'ելլէ որջէն: — Ինչո՞ւ համար ցորեկները չի պտըտիր: — Նապաստակները ինչպէս կը քնանան: — Նապաստակներուն ականջը ինչպէս է: — Առջեւի թաթերնին երկայն է, թէ ետեւի: — Աւելի դիւրաւ վեր կ'ելլեն, թէ վար կ'իջնեն: — Քանի տարի կ'ապրին: — Շատ կը պոռան:



### Յ1. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Աղուէսը օր մը սեղան պատրաստեց մացառի մը շուքին տակ, և արագիլը<sup>(1)</sup> ճաշի հրաւիրեց: Ճաշը պարզ էր, մէկ տեսակ մը ապուր միայն զոր տափակ պնակի մը մէջ լեցուցած բերաւ:

Արագիլը, որուն կտուցը շատ երկայն ու բարակ է, չկրցաւ փշրանք մը բան ուտել այդ պնակին մէջն, և բոլոր կերակուրը աղուէսը ինք լափեց:

Արագիլին սիրաը շատ վիրաւորուեցաւ այս անքաշաքավար հիւրընկալութենէն<sup>(2)</sup>, և միտքը զրաւ որ ինք ալ խալ մը ընէ անոր փոխարէն:

Ուստի քանի մը շաբաթ ետքը գնաց աղուէսին աղաչեց որ ճաշի գայ իրեն. «Կը խօսինք կը խնդանք, կ'ուտենք կը խմենք, և աղուոր ժամանակ կ'անցընենք»,» ըստ անոր:

Աղուէսը ուրախութեամբ ընդունեց այս հրաւէրը, և որոշեալ ժամուն ելաւ գնաց:

Համեղ կերակուրին հոտը աշխարհք բռներ էր, և աղուէսին ախորժակը հետզհետէ աւելի կը բացուէր:

«Այս ինչ աղուոր բաներ պատրաստեր ես, կ'ըսէր արագիլին. շատ ծախքէ եկը ես, սիրելի բարեկամ» մո.,» ու անհամբեր կ'սպասէր համադամ ճագարներուն որոնք շամբուրին վրայ շարունակ կը գառնալին:

Մէջ մըն ալ նայիս, աղուոր ամանի մէջ սեղան բերուեցաւ ճագարին միաը սքանչելի խորոված: դժբախտաբար ամանին բերանը նեղ ու վիզը շատ երկայն էր:

Արագիլը անմիջապէս կտուցը խոթեց ու սկսաւ ախորժակով ուտել:

Բայց աղուէսին ցտուկը լայն էր ու անոր մէջ չէր մտներ:

Ուստի անօթի ծարաւ իր տունը գարձաւ, սասարկ նեղացած, ականջները կախ:

Մինչ արագիլը խնդալով կը պոռար ետեւէն.

«Անուշներ ըլլայ, աղուէս եղբայր. երբ որ կ'ուզես հրամմէ նորէն:»

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ.** — Ինչ որ ընեւ, ան կը զսնես. ուստի պէտք է բարութեամբ ու խաղախարութեամբ վարուի աւելնուն հետ, երե կ'ուզենի որ անոնի ալ նոյնպէս վարուին մեզի հետ:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

(1) Վերագիլ. — Երկայն ոտքերով, երկայն կտուցով թռչուն մըն է

(2) Հիւրընկալուրիւն. — Հիւր ընդունիլ. (Եւլի:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Աղուէսը ուր սեղան պատրաստեց: — Զնկ հրաւէրեց: — ձաշը ինչ ամսնի մէջ բերաւ: — Արագիլը ինչն չկրցաւ ուտել: — Ո՞վ կերաւ կերակուրը: — Արագիլը ինչ ըրաւ ասոր փոխարէն: — Արագիլին բերած կերակուրը ինչ տեսակ ամսնի մէջ դրուած էր: — Ո՞վ կերաւ այդ կերակուրը: — Ինչն աղուէսը չկրցաւ ուտել: — Արագիլը ինչ պոռաց աղուէսին:



### 32. ԳԱԳԻԿ Ա.

Այս պատկերին մէջ կը տեսնէք արձան(1) մը . երկար մօրուքով, պատկառելի(2) մարդ մըն է, զլուխը ապարօշ(3) փաթթած և երկար վերարկու մը հագած որ մինչեւ ոտքերը կ'իջնէ : Ասիկա Հայոց Բագրատունի թագաւորներէն Դագիկ Ա. ի արձանն է որ վերջերս գտնուեցաւ Անիի աւերակները փորուած միջոցին :

Այդ արձանին քով եկեղեցական մը կեցած է, ան

ալ իզմիրեան կաթուղիկոսն է որ լուսանկարուած(4) է Անի գտնուած ատեն :

Դագիկ Ա. նշանաւոր եղած է իր խելքով ու իր գործերով : Ինք Հայաստանի մէջ առաջ տարած է երկ-կրագործութիւնը(5) և վաճառականութիւնը(6) վանքեր ու դպրոցներ հաստատած է, և եկամուտներ(7) կապած է եկեղեցիներուն և եկեղեցականներուն :

Երեսուն տարի թագաւորած է Անիի մէջ ասկէ ինը դար առաջ, ուր չինել տուած է մեծ ու փառաւոր եկեղեցի մը, Ա. Դրիգոր Լուսաւորիչ անունով :

Իր կինն ալ, Կատրամիտէ թագուհին աւարտեց Անիի Մայր Եկեղեցիին չինութիւնը զոր Սմբատ թագաւորը սկսած էր, և որուն պատկերը տեսաք արդէն :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Պատկառելի. — Յարզանք աղբող :

(2) Արձան. — Քարէ կամ գանձ շինուած կերպարանք :

(3) Ապարօշ. — Գլխու փաթթոց :

(4) Լուսանկարել. — Պատկերը քաշել :

(5) Երկրագործութիւն. — Հողը փորել, ցորեն, գարի և այլն ցանել ու բուացնել :

(6) Վաճառականութիւն. — Առուտուր ընել :

(7) Եկամուտ. — Շէնքերէ, տուներէ, տեղերէ առնուած վարձք :

**ՃԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Այս պատկերին մէջ տեսած արձաննիդ ինչպէս է, — Որո՞ն արձանն է այն: — Քովը զսնուող եկեղեցականը նվազ է: — Դագիկ Ա. թագաւորին արձանը ուրկէ զսնուեցաւ: — Ի՞նչ ովէ Դագիկ Էր Դագիկ: — Ի՞նչ նշանաւոր զործ ըրած է: — Որպէս թագաւոր էր Դագիկ: — Ի՞նչ կամ դար առաջ, — Անիի մէջ ինչ շէնք շինել տուած է: — Իր կինը ինչ զործ ըրած է: — Ի՞նչ է իր կնոց անունը:



### 33. Փ Ի Ա Ի Կ Ս

Փափուկ մուշտակով<sup>(1)</sup> աղուորիկ փիսի՛կ,  
Եկո՛ւր քընացիր հոս ծունկիս վրայ,  
Աչուկըդ գոյցէ՛, և մըշիկ մրշիկ  
Հանգչէ հանդարտիկ, քունդ անուշ ըլլայ:  
Դուն չար կատու չես, չես ճանկռտեր զիս,  
Օր մը դպած չես իմ թել մը մազիս:  
Փալլուն աչուկներդ յակինթի<sup>(2)</sup> նըման,  
Երբ ինձի նայիս, կը խնդան կարծես,  
Ու թաթիկներդ ալ թաւիչ<sup>(3)</sup> կը դատնան  
Երբ անոնց ծայրով իմ դէմքս շոյես<sup>(4)</sup>:  
Դուն գոլ կատու չես, չես լացըներ զիս  
Օր մը դպած չես հայիս կամ կաթիս:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Մոււտակ. — Անսառունի մազոտ մորթ (*+է-ր+*):

(2) Յակինթ. — Ծանրազին կարմիր քար մը (*ւ-ո-ո-ն*):

(3) Թաւիչ. — Մազոտ մետաբսէ կերպաս մը (*ւ-ո-ք-չ-*):

(4) Շոյես. — Գզուես:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ի՞նչ կ'ըսես փիսիկիդ: — Փիսիկդ չար է: — Կը ճանկռտէ: — Փիսիկիդ աչուկները ինչի կը նմանին: — Թաթիկները ինչպէս կ'ըլլան, Երբ դէմքդ շոյէ: — Փիսիկդ զքեզ կը լացնէ:



### 34. Դ Ի Ւ ՑԱԶ Ա Զ Ն Ո Ւ Հ Ի Ն

Մեռնի՞նք հայրենիքին համար:  
Ֆրանսացիները 1870 ին կը պատերազմէին Գերմա-  
նացւոց հետ:

Բախտը Գերմանացւոց կողմն էր այս անգամ, եւ  
Ֆրանսացիք, հակառակ իրենց քաջութեան, պարտուեցան:  
Երբ Բրուժանիք Մէցի<sup>(1)</sup> մօաեցան, բոլոր բնակիչ-  
ները ձգեցին վիախան: Շրջականները ագարակ մը կար,  
որուն մէջ աղջիկ մը պահապան ձգեր էին:

Երբ թշնամի զինուորները ևկան տունը պաշարելու<sup>(2)</sup>,  
տեսան աղջիկը, և առին իրենց պետին<sup>(3)</sup> քով տարին:

Ապան<sup>(4)</sup> աղջկանը ըսաւ.

— Մի՛ վախնար, քեզի չարիք մը չենք ըներ, մի-  
այն հարցումներուս պատասխան տո՛ւր: Երկու ժամ ա-  
ռաջ ֆրանսական բանակ<sup>(5)</sup> մը անցաւ հոսկէ, ո՞ր կողմ  
գնաց:

Աղջիկը տժգունեցաւ<sup>(6)</sup>, յետոյ վայրկեան մը մտածելէ ետքը, պատասխանեց.

— Ֆրանսացի եմ ես, և չեմ կրնար ըսել ձեզի ինչ որ կրնայ փրամսացիներուն վեաս պատճառել:

— Հիմակ գաղանիքը բերնէդ կ'առնենք, յարեց բրուսիացի սպան, և զինուորներուն դառնալով, պոռաց.

— Զինուորներ, դուքս հանեցէք այս աղջիկը և պատին կապեցէք:

Սպային հրամանը գործադրուեցաւ, եւ վեց հոգի կարգաւ շարուեցան, հրացաննին աղջկանը ուղղած, իրենց պետին հրամանին սպասելով քաշելու համար:

— Հիմայ, ըսաւ սպան աղջկանը, հիմայ խօսէ՛ նայիմ:

Աղջիկը լուռ կեցաւ:

— Նորէն կը հրամայեմ քեզի, խօսէ՛:

Դարձեալ լուռ կեցաւ:

— Զինուորներ, կրա՞կ,

Եւ դիւցազն աղջիկը ինկաւ մեռաւ գնտակներէն զարնուած:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(<sup>1</sup>) Մ'եց. — Գերմանական քաղաք մը:

(<sup>2</sup>) Պատարել. — Երջապատել:

(<sup>3</sup>) Պետ. — Մեծ:

(<sup>4</sup>) Սպայ. — Մեծ զինուորական:


(<sup>5</sup>) Բանակ. — Շատ զինուորներու խումբեր:

(<sup>6</sup>) Տժզունեցաւ. — Գոյնը նետեց:

(<sup>7</sup>) Գործադրուեցաւ. — Կատարուեցաւ:

(<sup>8</sup>) Գիւցազն. — Մեծ քաջութեան տէր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ֆրանսացիները երբ պատերազմեցան Բրուսիացւոց հետ, — Ո՞վ յաղթուեցաւ: — Երբ Ֆրանսացիք փախան, ազարակին մէջ ով մնաց: — Թշնամի զինուորները աղջկանը ինչ հարցուցին: — Աղջիկը ինչ պատասխանեց: — Ետքը ինչ պատահեցաւ: — Ֆրանսացի աղջիկը ինչո՞ւ մեռաւ:



### ՏԵԼԱՑԻ ՇՈՒՆ ՄԸ

Մեծ քաղաքի մը մէջ քանի մը բարեկործ<sup>(1)</sup> տիկիններ մէջերնին գրամ ժողվեր էին, և ամէն օր խեղճթաղի մը աղքատ ծերունիներուն կերակուր կու ատյին:

Կէս օրին, աղքատները կու գային ցած տնակի մը առջին, զանգակի մը չուանը կը քաշէին. պղտիկ պատունան մը կը բացուէր գրեթէ գետնին հաւասար, և պնակ մը կերակուր կը գրուէր պատուհանին առջիւ: Ծերունին իր հեար բերած ամանին մէջ կը լիցնէր կերակուրը և կ'առնէր կը առնէր:

Յետոյ, ուրիշ մը կու գար, և ամէնքն ալ իրարուետէ իրենց կերակուրը առնելով կը մեկնէին:

Շուն մը , որ միշտ այն տեղուանքը կը պարտէր անոնց ըրածը ուշադրութեամբ դիտեց , ծերունիներուն չուրջը սրբաց(2) որ իրեն ալ բաժին մը հանեն , բայց տեսնելով որ զինքը մտածող չկար , որոշեց ինք իր զրկուն ճարը տեսնել :

Օր մը , աղքամներուն մեկնելէն ետքը , գնաց ինք ալ զանգակին չուանը քաշեց . պատուհանը բացուեցաւ , և պնակ մը կերակուր երևան եղաւ : Շունը անմիջապէս լափեց(3) . դայն ու հեռացաւ :

Սյս յաջողութենէն(4) քաջալերուած(5) , խելացի կենացնին սկսաւ ա'լ ամէն օր պատուհանին առջին ներկայանալ :

Ծառաները հասկցան շանը վարպետութիւնը , բայց ձայն չհանեցին , ուզելով կերակրել այդ շունը որ այդքան խելք ցոյց կու տար փորը կշտացնելու համար :

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Բարեգործ . — Բարիք լնող :

(2) Սլբաց . — Պոլտկեցաւ :

(3) Լափիել — Շուտ շուտ ուտել :

(4) Յաջողութիւն . — Գործի մը զլուխ ելլել :

(5) Քաջալերուած . — Ուժ առած :

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ . — Բարեգործ տիկինները ի՞նչ կ'ընէին . — Պատուհանին առջեւ ի՞նչ կը գրուէր . — Ենթունին ի՞նչ կ'ընէր . — Շունը ի՞նչ ըրաւ . — Շունը մէկ անգամ միայն քաշեց զանգակին չուանը — Ծառաները ի՞նչ ըրին :



#### 36. ԲԱՐԻ ՊԻԺՈՒՆ

Պօլոս պըտոյափ տարած էր Պիժուն ,  
Տան պահապանը , հաւատարիմ չուն .  
Եւ անոր մէկ փոքր յանցանքին համար  
Տըւած էր խկոյն պատիմ մը յարմար :  
Երբ կը զառնային , հազիւ կէս ճամբան ,  
Երկու չար արդաք իր գիմացն ելան .  
Կ'ուղէին կըռուիլ , վընասել իրեն ,  
Ու կը սրուային . «Մ'անցնի'ր այս տեղէն :»  
Իր ճամբան կտրած արգելք կ'ըլլային(1) .  
Բայց Պիժուն յանկարծ հաչելով ուժգին  
Իր սուր ակուաներն անոնց ցոյց տրւաւ ,  
Եւ արդաքն խկոյն վախան ըշտապաւ(2) :  
Պօլոս այն ատեն համբուրեց Պիժուն .  
« — Դուն ինձմէ լաւ ես , չունի'կս իմ սիրուն ,  
Բայտ գգուանքով(3) : Երբ ծեծեմ ըգքեզ  
Դուն չես բարկանար , ոտքըս կը լըզես .  
Խսկ երբ չար արդաք վըրաս յարձակին ,

Իսկոյն աչքերէղ բոցեր ժայթքին :  
Տղաք կը սոսկան հաջելէղ անդամ :  
Իմ աղուո՞ր Պիտուս, անգի՞ն(4) բարեկամ :

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ.** — Մի՛ վճառի կենդամիներուն . անել շատ անգամ օգտակար կ'ըլլան ձեզի եւ կը պաշտպանեն զաեց բշամիներու դիմ :

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Արգելվ կ'ըլլային.** — Զէին թողուր :

(2) **Ետապաւ.** — Շուր շուր :

(3) **Դգուանենով.** — Շոյելով :

(4) **Անգին.** — Շատ մեծ արժէք ունեցող :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Ո՞վ էր Պիտուն . Ի՞նչ ըրաւ Պօղոս Պիտուն : — Դիմացնին ով ելաւ : — Տղաքը ի՞նչ պոռացին : — Պիտուն ի՞նչ ըրաւ : — Տղաքը ի՞նչ ըրին : — Պօղոս ի՞նչ ըստաւ այն ատոն Պիտուն :

#### 37. Ս. ՍԱՐԳՍԻ ՍԱԳԸ

«Այսօր անունիս օրն է, ըստ փոքրիկ Սարգիս իր եղբայրներուն ու քոյրերուն . այս իրիկուն խորոված սագ մը պիտի ուտենք» :

Երբ մութը կոխեց, լոյսերը վառեցին, և տղաքը զուարթութեամբ վազեցին տեղերնին նստեցան ճաշի սեղանին շուրջը, անհամբեր սպասելով խոստացուած կերակուրին :

Վերջապէս սպասունին եկաւ, և կրակին առջեւ շամփուրին(1) անցուած սագը գիտելով . «Կէս ժամ պէտք է, ըստ, որ աղէկ մը եփի» :

Տղաքը, այս իտոքերը լոելով, սկսան լալ պոռալ :

Այն ատեն սպասունին վարպետութիւն մը բանեցնելով, ըստ անոնց . «Ենելօք կեցէ՛ք, այսօր սարսափելի աղապիւնիւլ մը կը պտըտի փողոցները, և անսառակ տղաքը տոպւրակը կը դնէ կը տանի : Եթէ չը լոէք, սագը անոր կուտամ» :

Մանուկները այս խօսքերուն կարեւորութիւն չտուին և սկսան ա՛լ աւելի պոռչտալ(2) որ սագը բնրէ :

Սպասունին պատուհանը բացաւ, շամփուրը առաւ և պատուհանէն դուրս երկնցնելով, ըստ . «Առ, աղապիւնիւլ, սա սագը դուն կե՛ր, անուշնե՛ր ըլլայ ,»

— Շնորհակալ եմ, պատասխանեց հաստ ձայն մը փողոցէն :

Ճիշդ այդ վայրկեանին անօթի գող մը կ'անցնէր ցած պատուհանին տակէն, որ շամփուրը անցուած սագը յաշվշտակելով փախաւ :

Մանչ աղջիկ սկսան աղաղակներ արձակել, ողբալ, ձչել(4) : Մայրերնին այս աղմուկները լոելով, քովերնին վազեց և պատահածը իմանալով՝ ըստ :

— Ահա՛ ձեր անհամբերութեան և որկրամոլութեան(4) պատիժը, տղա՛քս : Այս իրիկուն սագի տեղ պանիր հաց միայն պիտի ուտէք» :

Յեսոյ սպասունին դառնալով .

«Բանի՛ քանի անգամ պատուիրած եմ քեզի, ըստ, որ ատանկ սուտ բաներ չպատմես աղոց : Անմիտ անհնաշ զանդութիւնով պատժելու համար, ամսականէղ վար պիտի դնեմ սագին և շամփուրին գինը» :

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Ետամիուր.** — Սուր երկամ որուն վրայ միս կ'անցըննեն և կը

(2) **Պոռչտալ.** — Պոռալ կանչել :

[Խորովնեն]

(3) **Ճչել.** — Սուր ձայներ հանել :

(4) **Որկրամոլութիւն.** — Շատուկերութիւն :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Սարգիս ինչ ըստ իր եղբայրներուն եւ քոյքերուն: — Երբ մութք կոխեց տղաքը ինչ ըրին: — Սպասուին ինչ ըստ տղոցը: — Տղաքը այս խօսքերը լսելով ինչ ըրին: — Սպասուին ինչ ըստ: — Մանուկները լրեցին: — Այն ատեն սպասուին ինչ ըրաւ: — Փողոցէն ձայն մը ինչ պատասխանեց: — Ո՞վ էր այդ խօսքերը ընողը: — Տղաքը ի՞նչ ըրին: — Մայրենին երբ պատահածը իմացաւ, ի՞նչ ըրաւ:



### 38. ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ամէնքդ ալ գիտէք սա երդը զոր կ'երգեն հայ աղաք Վարդանանց տօնին օրը.

Իմ հայրենեաց հոգիս Վարդան,

Անուշ Վարդան,

Հոգիս հոգւոյդ եղնի զուրպան<sup>(1)</sup>, ևն :

Այս երդը շնուռած է քաջ Վարդան Մամիկոնեանի համար, որ տամնընդ գար առաջ, 1036 ուրիշ քաջերու հետ նահատակուեցաւ. <sup>(2)</sup> Հայաստանի մէջ:

Այն ատենները Պարսիկները կը պաշտէին, եւ իրենց թագաւորը ուզեց որ Հայերն ալ կրակապաշտ ըլլան: Վարդան որ Քրիստոնեայ զօրավար մըն էր, դէմ դրաւ, և հայ քաջերու գլուխը անցած՝ անոնց վրայ յարձակեցաւ:

Յազկերտ շատ զօրք զրկեց Հայաստան, և Աւարայրի դաշտին մէջ երկու բանակները պատերազմնեցան իրարու հետ:

Պարսիկները իրենց հետ շատ մը փիղեր<sup>(3)</sup> բերեր էին, որոնք իրենց բանակին առաջքը տեղաւորուեցան:

Այն ատեն տակաւին հրացան չկար. հեռուէն նետով<sup>(4)</sup> կը կուռէին:

Հայերը մեծ քաջութեամբ կոռւեցան մինչեւ իրիկուն, բայց Վարդան զարնուեցաւ ու մեռաւ. իրեն հետ մեռան նաև բազմաթիւ քաջ զօրավարներ, ու Հայերը ցրուեցան:

Այն ժամանակէն ի վեր ճիշդ 1462 տարի անցած է, և Հայերը ամէն տարի մեծ հանդէսներով կը տօնեն քաջ Վարդանի եւ իր ընկերներուն յիշատակը:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ


(1) Եղեի դուրպան. — Մէկուն համար մեռնի:

(2) Նահատակուիլ. — Մէկը կամ բան մը պաշտպանելու համար մեռնի:

(3) Փիլ. — Մէծ կենդանի մը որ պատիճ ունի:

(4) Եե. — Հին ատենները զորֆածուած զէնք մը որ սուր ծայրով երկաթ մըն է և լարի մը վրայ բաշուելով կը նետուի:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Ի՞նչ երգ կ'երգեն Վարդանանց տօնին օրը: Ո՞վ է քաջ Վարդան: — Ի՞նչ ըրած է: — Ո՞ւր նահատակուեցաւ: — Յազկերտ ո՞վ էր: — Ի՞նչ առաջարկեց Հայերուն: — Հայերը ընդունեցին: — Վարդան ի՞նչ ըրաւ: — Ո՞ւր պատերազմնեցան: — Ետքը ի՞նչ պատահեցաւ: — Այդ պատերազմէն ի վեր բանի տարի անցած է:



### 39. ԿԱՏՈՒՆ ԵՒ ՄՈՒԿԸ

Ծակին մէջէն օր մը մուկը տեսաւ կատուն։  
— «Ի՞նչո՞ւ համար, ըստւ, չարիք կ'ընես մեզ դուն։  
Խեղճ մուկերը հասցուցած չեն քեզի վլնաս։  
Եթէ ճանչնաս զանոնք դուն գոհ պիտի մընաս։  
Գիշեր ցորեկ ինչո՞ւ ըզմեղ կը հալածես<sup>(1)</sup>։  
Կ'ուզե՞ս, քեզի բաժին հանեմ<sup>(2)</sup> կերած հացէս։  
Եւ հաշտըւինք, մրտերմանա՞նք իրարու հետ,  
Վըրէժն<sup>(3)</sup> ու քէն<sup>(4)</sup> ալ մեր մէջէն ըլլան անհետ<sup>(5)</sup>։  
— Բարի մուկ մը կ'երեւաս դուն և խելացի,  
Այդ խօսքերոդ բարձր ու վըսեմ շատ սիրեցի։  
Կ'ուզեմ զքեղ մօտէն տեսնել. ելիր ծակէդ,  
Ցուցուր ինձի սա անուշիկ հասակըդ գէթ<sup>(7)</sup>։  
Առաջ եկո՛ւր, ի՞նչ կը վախնաս, անոր կ'ըսէր։  
Ես ոչ քեզի, ոչ քու ցեղիդ չեմ վլնասեր։»  
Մուկն անխոհեմ ելաւ ծակէն տոտիկ տոտիկ։  
Կատուն ցաքտեց ու զայն ըրաւ բըզիկ բըզիկ։

ԲԱՐՈՅՍԿԱՆ. — Միշտ զգոյշ կեցէվ շողոփորթներին։

### ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Կը հալածես. — Ետեւէս կ'ինաս
- (2) Բաժին հանեմ. — Մաս մը տամ
- (3) Պէրէ. — Չարիքի փոխարէն չարիք։
- (4) Քէն. — Հակառակութիւն։
- (5) Անհետ ըլլան. — Վերնան,
- (6) Ասեմ. — Շատ բարձր։
- (7) Գէր. — Գոնէ։

ՃԱՐՅՈՒՄՆԵՐ. — Մուկը զո՞վ տեսաւ. — Ի՞նչ ըստ անոր. — Կատուն ի՞նչ պատասխանեց։

### 40. ԲՈՂԿԸ

Խեղճ պարտիզպան մը, իր պարտէզէն, ահազին<sup>(1)</sup> բողկ<sup>(2)</sup> մը հանեց որուն վրայ ամէն մարդ կը հիանար։ Ու առաւ տարաւ զայն գիւղապետին որ հարուստ մարդ մըն էր, և դաշտերուն ու պարտէզներուն մշակութեան մեծ հոգ կը տանէր։

Ուստի աղուոր բողկը տեսնելով, գովեց պարտիզպանին աշխատութիւնը, չնորհակալ եղաւ, ու երեք ոսկի նուէր տուաւ զայն քաջալերելու համար։

Գիւղին<sup>(3)</sup> մէջէն, ագարակապան մը, որ հարուստ, բայց ծակաչք<sup>(3)</sup> էր, երբ այս բանը իմացաւ, ըստ ինքնիրեն։

«Գիւղեցիկ հորթ<sup>(4)</sup> մը ունիմ. անմիջապէս գիւղապետին տանիմ։ Եթէ բողկին համար երեք ոսկի տուաւ, իմ հորթիս համար ով գիտէ ի՞նչ պիտի տայ։»

Խոկոյն կինդանին վիզէն չուան մը անցուց ու գիւղապետին տանելով, աղաչեց որ ընդունի իր նուէրը։

Գիւղապետը շատ խելացի մարդ մըն էր, և ազարակապանին բնաւորութիւնը զիտէր . ուստի հասկցաւ անոր միտքը, ու ըստւ .

— Քանի որ այդչափ կ'աղաչես, կ'ընդունիմ . բայց ես ալ կ'ուզեմ քեզի նուէր մը ընել փոխարէն : Ուստի անանկ պարգև մը տամ որ հորթիդ երեք անգամը արժած է ինձի :

Ու հանեց պարտիզապանին բերած խոշոր բողկը առւաւ ագարակապանին, պատժելու համար անոր ծակաչութիւնը :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ.** — Ծակայֆ մարդը ոչ մէկին կը սիրուի :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(<sup>1</sup>) Սիազին. — Շատ մեծ :

(<sup>2</sup>) Բողկ. — Բոյս մը (Բողկ) :

(<sup>3</sup>) Դակաչն. — Զկշտացող :

(<sup>4</sup>) Հորք. — Կոլի ձագ :

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Պարտիզանը ի՞նչ տարաւ զիւղապետին: — Գիւղապետը ի՞նչ ըրաւ աղուոր բողկը տեսնելով: — Ծակաչը պարականը ի՞նչ ըրաւ, երբ ասիկա իմացաւ: — Յետոյ ի՞նչ ըրաւ. — Գիւղապետը ի՞նչ ըստւ անոր: — Ի՞նչ նուէր տուաւ փոխարէն:

### **41. ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹԻՒՆ**

Այս տարի, շատ գեղեցիկ մրցանակ մը ստացայ . կաչիէ ոսկեպարդ կողքով սքանչելի զիրք մըն է, որուն մէջ շատ մը պատկերներ կան, ու շատ մըն ալ պատմութիւններ և շահեկան տեղեկութիւններ :

Այդ զիրքին մէջ կարգացի թէ հիմակուան մարդիկը աւելի աղէկ լուսաւորուած են քան առջի մարդիկը :

Հինաւուրց(<sup>1</sup>) գղեակներու<sup>2</sup> մէջ գործածուած ջաներու(<sup>3</sup>) պատկերներ կան այս զիրքին մէջ, և անսնց քով ճրագներ(<sup>4</sup>): Մեծ մայրիկս կ'ըսէ թէ յամանակաւ այդ ճրագներէն կը վառեն եղեր իրենց տանը մէջ :

Գիրքին մէջ խօսուած է նաև մեր հիմակուան գործածած մօմերուն և քարիւղի(<sup>5</sup>) լամպարներուն վրայ :

Կան նաև ելեկտրական լուսաւորութեան վրայ տեղեկութիւններ զոր մեր զիրքին մէջ տեսած չենք :

Այդ զիրքը կարգաէս ի վեր մեծ փափաք ունէի տեսներու իրական ջահեր եւ ելեկտրական լամպարներ :

Անցեալ շաբթու մեր զիրքին մէջ իրարանցում մը կար . մեր զիրքին տօնավաճառին օրն էր: Մեծ բաղմութիւն լեցուած էր հրապարակին(<sup>6</sup>) վրայ, և բոլոր մօտակայ զիւղերէն ու քաղաքներէն վաճառորդներ տեսակ տեսակ ասլրանքներ բերած էին ցուցադրելու(<sup>7</sup>):

Աողին անողին վրաններ(<sup>8</sup>) կանգներ էին: Երբ իրիւկուն եղաւ, փափաքիս հասայ: Խումբ մը մարդիկ ապում, պում (<sup>9</sup>) թմբուկ(<sup>9</sup>) կը զարնէին, ուրիշներ զուռնայի մը ձայնով կը պարէին: Եւ քանի մը գեղջուկներ խոշոր ջահեր բնած էին ձեռքերնին որմնք կը վառէին սեւ մուխեր արձակելով որ մարդուս աչքերն ու կոկորդը կ'այրէր :

Ակասի հազար, և աչքերէս արցունք եկաւ, բայց քիչ մը հեռան հրաշալի տեսարան մը կար :

Կապիկներու խոռարան մը հաստատեր էին մեծ շէնքի մը մէջ ուրկէ արձակուած լոյսը հրապարակը կը լեցնէր: Մեքենայ մը արագ արագ գատնալով կը լուսավառէր լամպարները ցորեկուան լոյս մը տարածելով ամէն կողմ: Մեքենան խոչոր հոլի մը պէս ձայն կը հանէր, և երբեմն կայծեր կը ցատքեցնէր: Այս էր ելեկտրական լոյսը :

Երջանիկ ենք որ հին ատենակը աշխարհը չենք եկած  
և քսաներորդ դարուն մէջ կ'ապրինք :

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ


- (1) **Հինաւուրց.** — Հին ժամանակի:
- (2) **Պղեակ.** — Թագաւորներու կամ իշխաններու բնակարան:
- (3) **Զահ.** — Վան կուպր քուած ցուպ զոր կը վառեն:
- (4) **Ճրագ.** — Ոչխարի ճարպով շինուած մոմ (Ետպ ժոժու):
- (5) **Քարիւղ.** — Մեր հիմակուան վառած հեղուկը (Ք-Կ-Ա-Հ-Ա-Լ):
- (6) **Հրապարակ.** — Փողոցին մէջ լայն տեղ մը:
- (7) **Ցուցադրել.** — Մէջտեղը զնել ցուցնելու համար:
- (8) **Թմբուկ.** — Տեսակ մը գեղզուկ նուազի գործիք (Թ-Մ-Յ-Ո-Ւ-Կ):
- (9) **Արան.** — Լաթէ շինուած պատսպարան (Ա-Ր-Ա-Ն):

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Այս տարի մրցանակ ստացած զիրքիդ մէջ  
ինչ կարդացիր: — Ի՞նչ պատկեր տեսար այդ զիրքին մէջ: — Այդ  
զիրքը կարդալէդ ետքը ի՞նչ փափար ունեցար: — Անցեալ շաբթու  
ի՞նչ թւ իւրարանցում կար ձեր զիւղին մէջ: — Տօնավաճառին ի՞նչ  
կը բերեն զիւղը: — Երբ իրիկուն եղաւ, ի՞նչ ըրին: — Հասկցն թէ  
հին ատենները ի՞նչ լրյս կը վառէին մարդիկ: — Ելեկտրական  
լրյսը ի՞նչպէս էր:

**42. ԿԱՂԱՍՄԸԸ**

Երկու մեծկակ տըղաք, Արսէն և Գասպար  
Պարտէզի մը պատին քովէն կ'երթային.  
Արսէն ըսաւ. «Սա կաղամբը տե՛ս, աղբա՛ր,  
ի՞նչ խոշոր է, ի՞նչ աղուոր, ի՞նչ ահազին:  
— Ատ ալ բա՞ն է, գոչեց Գասպար հեղութեամբ,(1)  
Մեր մատուռին զանգակատան չափ խոշոր

Ես կաղամբ մը տեսած եմ, բայց ի՞նչ կաղամբ:  
— Ես ալ, ըսաւ, շինեցի դեռ անցեալ օր



Մեր մատուռին մեծութեամբ սահն(2) մը խեցի(3):  
— Ի՞նչո՞ւ այդչափ մեծ շինեցիր, աղնաչէն(4):  
— Զըհասկցա՞ր, ապո՞ւշ, դիտմամբ շինեցի  
Որ քու կաղամբ այդ սահնին մէջը խաշեն»:

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ.** — Մեծխօփկութիւնը շատ ծաղրելի  
թերութիւն մըն է. համես մարդը իմֆ իր անձը, իր զոր-  
ծերը չի մեծցներ, եւ անոնց վրայ չի խօսիր:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Հեղնուքեամբ.** — Ծաղրելով:
- (2) **Սահն.** — Կերակուր եփելու աման:
- (3) **Խեցի.** — Հողէ շինուած և փուռի մէջ եփուած նիւթ:
- (4) **Տնաւէն.** — Տունը շէն պահող (հոս հեղնութեամբ ըսուած է):

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Երկու տղաքը ո՞ւր կ'ընթանային: — Արսէն  
ի՞նչ ըսաւ Գասպարին: — Գասպար ի՞նչ պատասխանեց: — Արսէն  
հաւատա՞ց անոր ըսածին: — Ի՞նչ պատասխան տուաւ: — Գասպար  
ի՞նչ հարցուց: — Արսէն ի՞նչ պատասխանեց:

### 43. ՇԱՀՈՒՆ ԿԷՍԸ

Դիւղացի ազնուականի<sup>(1)</sup> մը տունը հարսնիք կար : Հիւրերը հաւաքուեր էին արդէն , և օրերէ ի վեր կը տեւ էին պարերը , խաղերը և հացկերոյիները :

Որսեր , հաւեր , պտուղներ , անուշեղէններ առատ առատ<sup>(2)</sup> կը բերէն սեղանին վրայ . միայն ձուկ չկար , որովհետև գիւղը շատ հետու էր քաղաքէն , ու ձմեռը սաստիկ ըլլալուն՝ ծովը յուզուած էր շարունակ , և ձուկ չէր բռնուեր :

Յանկարծ ծառայ մը եկառ աան տէրոջը իմաց տուաւ թէ ձկնորս մը խոշոր ձուկ մը բերեր էր : Ամէնքը ուրախացան , և ձուկն ու ձկնորսը ներս բերուեցան հիւրերուն քով :

— Ապրիս , ըսաւ ազնուականը , ձուկդ շատ աղուոր է , ուղած զինդ պիտի տամ : Քանի՞ դրու կ'ուզես :

— Ես դրամ չեմ ուզեր , տէ՛ր , պատասխանեց ձրկնորսը , բայց եթէ անսպատճառ բան մը տալ կ'ուզէք , հարիւր խարազանի հարուած տուէ՛ք ինծի :

Ամէնքը զարմացան , բայց ձկնորսը կը պինդէք :

Վերջապէս տան տէրը ստիպուած՝ հրաման ըրաւ որ մարդը պառկեցնեն ու անոր փափաքը կատարեն :

Ցիսուն հարուած տրուելէ ետքը , «Կեցէ՛ք , կեցէ՛ք , պոռաց ձկնորսը , այս գործին մէջ ընկեր մը ունիմ ես , պէտք է որ վարձքին կէսը անոր տաք» :

— Կոնչէ՛ նայինք , ո՞ր խենդն է ընկերոդ , ըսաւ տան տէրը :

— Զեր դռնապանն է , պատասխանեց խեղճ մարդը : Զթողուց որ ներս մտնեմ , մինչեւ որ չխոստացայ ձուկին

փոխարէն առածիս կէսը իրեն տալ : Հիմայ կ'ուզեմ խոստումն կատարել :

— Վայ , վայ , ըսաւ տան տէրը , անմիջապէս բերէ՛ք դռնապանը , և իր վարձքը<sup>(3)</sup> տուէ՛ք իրեն :

Անիրաւ գոնապանը բերին , յիսուն հարուած տուին իրեն , և տունէն ճամբեցին : Իսկ ձկնորսը առատօրէն վարձատրեցին :

**ԲԱՐՈՅԵԿԱՆ** . — Շահախմերութիւնը անազմիւ բան է . շահախմերութիւնը մարդիկ միշտ կը խայտախուին եւ իրենց արժանի պատիւքը կը զտեն :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Ազնուական . — Բարձր լնտանիքի վերաբերող մարդ :

(2) Առաւտ . — Լեցուն , շատ :

(3) Վարձք . — Փոխարինութիւն :

**ՃԱՐՅՈՒՄՆԵՐ** . — Դիւղացի ազնուականին տունը ի՞նչ կար : — Սեղանին վրայ ի՞նչ բան կը պակսէր : — Ինչո՞ւ ձուկ չէր բանուեր : — Ծաւան ի՞նչ իմաց տուաւ : — Ձուկն ու ձկնորսը ի՞նչ ըրին : — Ազնուականը ի՞նչ ըսաւ : — Ձկնորսը ի՞նչ պատասխանեց : — Տան տէրը ի՞նչ ըրաւ : — Ցիսուն հարուած տրուելէ ետքը , ձկնորսը ի՞նչ պոռաց : — Դգնապանը ի՞նչ ըսեր էր ձկնորսին :

### 44. ՏՈՐՔ ԱՆԳԵՂ

Շատ գարեր առաջ , Հայաստանի մէջ , երիտասարդ մը կար Տորք անունով , այնքան ուժով , այնքան քաջ , որ սովորական մարդու չէր նմաներ : Հասակը ծասի սէս բարձր էր , կուրծքը լերան պէս լայն , բայց դէմքը այնչափ սարսափելի էր , որ երեսը նայող կը զարհուրէր :

Դեռ տղայ էր, երբ ձեռքով ժայռեր կը ճնլքէր։ Առ սիւծը, վազրը<sup>(1)</sup>, բոլոր գազաններ կը դողային իր առջեւ, ու ոտքերը կը լցէին։ Իսկ Տորք զանոնք կը կերակրէր։ Իր բերած որսերէն կուտար անոնց, բայց եթէ զինքը բարկացնէին, ա՛լ Աստուած այնտեղ բան չունէր։

Երկրին շուրջը գտնուած գիւղացները բոլորն ալ իրեն կը դմէին, երբ իրենց գլխուն փորձանք մը գար, ու անմիջապէս օգնութեան կը համէր անոնց։

Սնգամ մը լսեց որ Սև Ծովի կողմէն թշնամիներ կու գային, գիւղերը կը կողոպտէին, մարզիկը գերի կը ըրունէին, աղաքը կը չարչարէին։ Սնմիջապէս վազեց գնաց, բայց աւազակներուն նաւերը հեռացեր էին։ Տորք սաստիկ զայրացած՝ պոռաց, առիւծի պէս մննչեց<sup>(2)</sup>, և լիոններէն խոշոր կտորներ փրցնելով նաւերուն հանեւէն նետեց։ Ծովը գլրդեցաւ<sup>(3)</sup>, ալիքները բարձրացան, նաւերը սկսան տատանիլ<sup>(4)</sup> ու մէկիկ մէկիկ բոլորն ալ ծովուն տակ սուզեցան<sup>(5)</sup>, աւազակներն ալ մէկտեղ։

Տորք սակայն իր ուժին չափ ճարտարութիւն<sup>(6)</sup> ալ ունէր։ Իր եղունգներով ժայռերը կը փորէր, ու սքանչելի արձաններ<sup>(7)</sup> կը լինէր։ Բաւական էր որ մէկուն երեսը նայէր քանի մը վայրկեան։ անոր պատկերը կը քանդակէր<sup>(8)</sup> քարին վրայ։

Թագաւորը Տորքին համբաւը<sup>(9)</sup> լսելով, ուզեց զայն տեսնել։ Մարդ զրկեց ու իր պալատը հրաւիրեց զայն։ Մեր հսկան<sup>(10)</sup> ահազին ծառ մը վերցուցած գենանէն կրնակը առաւ, անոր ճիւղերէն կախեց այծեամներ<sup>(11)</sup>, վայրի ոչխարներ, եղնիկներ<sup>(12)</sup>, եղջերուներ<sup>(13)</sup>, և այսպէս ներկայացաւ թագաւորին։

Թագաւորը հիացաւ մնաց այդ քաջ տղան տեսներով որ աշտարակի<sup>(14)</sup> մը չափ խոշոր էր և ուժեղ։ «Ապրիս, Տորք, ըստ, դուն մէկ մարդ չես, ամբողջ բանակ մըն էս»։

Իր պալատին մէջ հիւրընկալեց զայն, շատ պատիւներ ըրաւ, իր սեղանը նատեցուց, և նուէրներ տուաւ։ Ու սկսաւ հետը խօսակցիլ տեսնելու համար թէ այդ հրոկայ երիասաւրդը արդեօք իր ուժին չափ խելք ալ ունէր։

Տորք խելք ալ ունէր։ այնչափ իմաստուն<sup>(15)</sup> պատասխաններ կու տար թագաւորին հարցումներուն որ կը զարմացնէր զայն։

Օր մը թագաւորը հարցուց։ «Ո՞ւժը աւելի բարձր է թէ խելքը։»

Տորք պատախանեց։ «Երկուքն ալ լաւ են. վասուժ<sup>(16)</sup> մարդը մնձ խելք չի կրնար ունենալ. և ուժեղ մարդն ալ չի կրնար անխելք ըստալ, բայց արժանիքը զանոնք ունենալուն մէջ չէ. զանոնք գործածելուն մէջ է. մնձ մարդը ան է որ իր ուժը և խելքը բարի կը գործածէ։»

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Վազր. — Վայրենի և անզութ գազան մը։

(2) Մոնչել. — Առիւծի ձայն հանել։

(3) Գորդել. — Տեղէն խախտել։

(4) Տատանիլ. — Երերալ։

(5) Սուզեցան. — Տակը իշան։

(6) Ճարտարութիւն. — Արուեստ։

(7) Արձան. — Քարի վրայ փորուած պատկեր։

(8) Քանիղակել. — Փորել։

(9) Համբաւ. — Մեծ անուն։

(10) Հսկայ. — Շատ խոշոր մարդ։

(11) Այծեամ. — Վայրի այծ։

(12) Եղջերու. — Ստնաւոր կենդանի մը որ սստի պէս եղջիւրներ ունի (իւյի)։

(13) Եղնիկ. — Եղջերուի էղը։

(14) Աշտարակ. — Շատ բարձր շէնք։

(15) Խմաստուն. — Խելացի։

(16) Վաթուժ. — Ուժ չունեցող։

**ՀԱՐՅՈՒՄՆԵՐ**. — Ի՞նչպէս մարդ էր Տորբ: — Հասակը ի՞նչպէս էր: — Կուրծքը ի՞նչպէս էր: — Իր տղայութեանը ի՞նչ կ'ընէր. — Առկածը վազրը ի՞նչ կ'ընէին իրեն: — Ինք ի՞նչ կ'ընէր անոնց: — Իրեն դիմողներուն, ի՞նչ կ'ընէր: — Երբ լսեց որ թշնամիները զիւղերուն վրայ կը յարձակէին, ի՞նչ ըրաւ: — Ի՞նչ պատահեցաւ: — Տորբ իր ուժէն զատ ի՞նչ յատկութիւն ունէր: — Ի՞նչ կը շինէր: — Թագաւորը ի՞նչ ըրաւ Տորբին համբաւը լսելով: — Տորբ ի՞նչպէս ներկայացաւ թագաւորին: — Թագաւորը ի՞նչ ըսաւ անոր: — Յետոյ ի՞նչ ըրաւ անոր: — Անոր խելքը փորձելու համար ի՞նչ հարցուց: — Տորբ ի՞նչ պատասխանեց:

## 45. Ո Ր Բ Ը

Զեր մօր քնքուշ դրկին մէջ տաք  
Երբոր հանդիսաւ կը քընանաք,  
Կը պառկի որբն հողմն վըրայ.  
Մտածեցէ՛ք, փոքրիկ արդա՛ք:

Դուք ամէն բան ունիք առատ,  
Համբոյր, շաքար խաղալիք շատ.  
Որբն հոգեր ունի միայն.  
Մտածեցէ՛ք, փոքրիկ արդա՛ք:

Զիւնն երբ ծածկէ բոլոր աշխարհք,  
Բոցին(1) առջև դուք կը խայտաք(2).  
Կը դողբըզայ որբը սակայն.  
Մտածեցէ՛ք, փոքրիկ արդա՛ք:

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ**. — Պէտք է մեր ուրախութեամ մեջ,  
յիշենի որբերը եւ օգնենի անոնց:

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Թոց. — Կրակէն դուրս ելած փայլուն լոյսը:

(2) Կը խայտաք. — Կը ցատըուտէք:

**ՀԱՐՅՈՒՄՆԵՐ**. — Երբ զուք ծեր մօր զիրկը կը քնանաք, որբը ի՞նչ կ'ըլլայ: — Դուք երբ ամէն բան ունիք, որբը ի՞նչ ունի: — Երբ ծիւնը աշխարհը ծածկէ, զուք ի՞նչ կ'ընէր, որբը ի՞նչ կ'ըլլայ:

## 46. Մ Ո Ւ Թ Տ Ե Ղ Ը

Մայրը նոր վառեր էր լամազարը, որովհետեւ մութը կը կոնէր:

Սեղանին առջին նստած է Սմբատ, վեց տարեկան տղեկ մը որ կը խօսի, կը ինդայ. անոր քով, Արամ, իր հօրեղբօրորդին, արտում ախուր կը կենայ:

— Սմբա՛տ, կ'ըսէ մայրը, թաշկինակս պարտէզը ձգեր եմ, թթինիին տակ: Գնա՛ բեր աղա՛ս:

— Եյ՛, մայրիկ, կը պատասխանէ Սմբատ, ու տեղին կ'ելլէ:

Զե՞ս վախնար, կ'ըսէ ցած ձայնով Արամ:

— Ի՞նչ վախնամ:

— Զե՞մ զիտեր, բայց այնչափ մութ է որ . . . : Եթէ անկիւն մը՝ բան մը երեւայ աչքիդ . . . :

— Հարկաւ, մայրիկին թաշկինակը պիտի երեւայ տէքիս ու պիտի առնեմ բերեմ:

Սմբատ զուք կ'ելլէ: Հաղիւ քանի մը քազ առեր էր մութ ծառուղին(1) մէջ, երբ խոշոր չղջիկ(2) մը կ'ոկի թռչակի իր բոլորակիքը:

— Ահ, կ'ըսէ Սմբատ խնդառով, եթէ խեղճ թիթեռնիկ մը ըլլայի, պիտի սարսափէի քեզմէ:

Քիչ մը անզին բու(3) մը կը թռչի ծառերուն տակ  
տիսուր ճիչ մը արձակելով։ Սմբատ ա՛լ աւելի կը խնդայ։  
— Եթէ անփետուր պղտիկ ճնճղուկ(4) մը ըլլայի,  
ինչպէս պիտի գողգղայի բոյնիս մէջ։

Վերջապէս թթենին տակ համնելով, կը տեսնէ որ  
նստարանի մը վրայ խոշոր սեւ կատու մը կծկտեր(5)  
պառկեր է, եւ աչքերը երկու բոցի պէս կը փայլին։ Սըմ-  
բատ կը մարի խնդալէն։

— Ես մուկ չեմ որ զիս ուտես. աչքերդ ի՞նչ խոշոր  
խոշոր բացեր ես, խե՞նդ փիտիկ։

Յետոյ թաշկինակը կը գտնէ, կ'առնէ տուն կ'երթայ։  
— Ա՛ռ թաշկինակդ, մայրիկ, կ'ըսէ սենեակէն ներս  
մտնելով։

Արամ գողգղալով անոր մօտեցած է։

— Բան մը չերեւա՞ց աչքիդ, կը մրմնջէ ականջն ի  
վար, իրա՞ւ, բան մը չտեսա՞ր։

— Հապա՛, կը պատասխանէ Սմբատ հանդարտօրէն,  
չդիկ մը տեսայ որ քովէս անցաւ ու թեւիս դպաւ, բու  
մը տեսայ որ «Հո՛ւ, հո՛ւ» պոռաց երեսիս, եւ խոշոր սեւ  
կատու մը որ աչքերը կը կը բացած երեսս նայեցաւ։

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ. — Խելացի տղայ մը երբեք պէտ չէ  
վախնայ մուրեն, ստուերեն, կամ երեւակայական բա-  
ներէ։ Միշ պէտ է մսածէ թէ վախնալու ճշմարիս պա-  
ճառ մը կայ. երեք չկայ, ծաղրեղի կ'ըլլայ վախնարուն համար։

## ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Մառուղի. — Ճամբայ մը որուն երկու եզերքը ծառեր կան  
կարգաւ։

(2) Զդշիկ. — Տեսակ մը գիշերային թուչուն (է՛տ գուշակ)։

(3) Բու. — Գիշերային թուչուն մը (պայտակ)։

(4) Ճնճղուկ. — Փոքրիկ թուչուն մը (սերւե)։

(5) Կծկտեր. — Թեւը ոտքը ժողվեր է։

## 47. ՏԱՄԸ ՏԱՐԵԿԱՆ ՀԵՐՈՍ ՄԸ

Այն տարին ձմեռը սովորականէն աւելի սաստիկ էր  
կարնոյ մէջ(1)։

Առառու մը, Զիթող գիւղին տղաքը կարնոյ դաշտը  
գացեր էին սահնակ խաղալու(2) սապին վրայ։

Բարշամ տասը տարեկան մանչ մը այս խումբին  
զլուխը անցած՝ կ'առաջնորդէր անոնց, որովհետև ամէնէն  
խելացին ու սրատան էր մէջենին։ Բայց ինքն ալ տղայ  
էր, և այնքան խաղի ինկաւ, որ չնշմարեց(3) թէ զիշեր  
կ'ըլլար։

Մութը կոխեր էր, աստղերը սկսեր էին փայլի ճեր-  
մակ երկինքին վրայ, և տղաքը շարունակ կը սահնէին։

Յանկարծ սարսափի աղաղակ մը լսուեցաւ։

— Արջը(4), ա՛րջը, կը պոռային տղաքը, և կատաղի  
գազանը քովերնին հասեր էր արդէն. փախչելու ժամա-  
նակ չկար։

— Տեղերնէդ մի՛ շարժիք, ըսաւ Բարշամ. ուժով մը  
արջին նայելով, որ քանի մը քայլ անդին կեցեր էր. ես  
ձեզի պիտի աղատեմ։

Եւ լայն գանակը քաշեց մէջքէն։

Ճիշդ այդ պահուն արջը աղոցը վրայ յարձակեցաւ,  
բայց Բարշամ անոր զիմացը վաղեց։

Երբ անդութ գազանը ոտքի վրայ ելաւ, կայնեցաւ  
փոքրիկ տղան իր թեւերուն մէջ խեղզելու համար, տղան  
դանակը անոր մարմնին մէջ խոթեց մինչև ծայրը. բայց  
արջը իր ճիրաններովը(5) սեղմեց զայն։ Բարշամ դանակը  
թողուց, երկու ձեռքովը գաղանին կոկորդը բռնեց և բո-  
լոր ուժովը սեղմեց։

Երկուքը մէկտեղ ճիւնին մէջ թաւալեցան(6), մինչ-

գեռ աղաքը զիւղ կը վազէին «օգնութիւն» պուալով։  
Երբ զիւղացիները հասան, դործը գործէն անցեր էր։  
տղան ալ արջն ալ մեռեր էին։

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ.** — Ազնիւ սրի ժր մարդը իր կեանիը  
կը զոհի ուրիշները ազատելու համար։

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) **Կարին.** — Հպաստանի մէջ բազար մը (Երբուայ)։
- (2) **Սահնակ խաղալ.** — Մառին վրայ սահնեով զուարձանալ։
- (3) **Զեմարեց.** — Աչքին չզարկաւ։
- (4) **Արջ.** — Մարդակեր զազան մը (այց)։
- (5) **Ճիրան.** — Վայրի կենդանիներու եղունգները։
- (6) **Թօաւալիլ.** — Գլտորիլ։

**ՃԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Զմեւը ինչպէս էր այն տարին։ — Ջիթող  
զիւղին տղաքը ի՞նչ ընելու զացեր էին։ — Բարշամ ի՞նչ ըրաւ։ —  
Մինչեւ Ե՞րբ խաղացին տղաքը։ — Յանկարծ ի՞նչ լսուեցաւ։ — Ին-  
չու պոռացեր էին տղաքը։ — Ի՞նչ ըսաւ Բարշամ։ — Յետոյ ի՞նչ  
ըրաւ։ — Արքը ինչ ըրաւ։ — Երբ Բարշամ դանակը զազանին փորը  
խոթեց, ան ի՞նչ ըրաւ։ — Երկուքը մէկէն ի՞նչ եղան։ — Միւս տղաքը  
ի՞նչ ըրին, — Քիւղացիր կրցա՞ն Բարշամը ազատել։ — Ի՞նչ տեսակ  
գործ էր Բարշամին ըրածը։

### 48. ՈՍԿԻ ՏԱՊԱՐԸ

Փայտահատ(1) մը ծովուն եղերքը, բարձր ժայռի մը  
վրայ ծառ մը կը կարէր։ Յանկարծ կացինը(2) ձեռքէն ին-  
կաւ և ջուրերուն մէջ կորսուեցաւ։

Խելք մարդը սկսաւ լալ ողբալ, որովհետեւ եթէ կա-  
ցին չունենար, ի՞նչպէս փայտ պիտի կարէր, և եթէ փայտ  
չկարէր, ուրկէ դրամ պիտի գտնէր իր կինը և զաւակները  
կերակրելու համար։

— 95 —

իր ողբերը լսելով, ծովին մէջէն պարիկ մը եղաւ, և  
իրեն մօտենալով ըսաւ։

— Ինչո՞ւ կուլաս, ըսէ՛ ինծի, ամէն ցաւիդ ես կրնամ  
դարման(4) գտնել։

— Կացինա ծովը ինկաւ, ըսաւ մարդը հեծկլտալով(5),  
և դրամ չունիմ որ ուրիշ մը գնեմ։

Պարիկը վայրկեան մը ալիքներուն մէջ աներեւոյթ  
եղաւ, յետոյ նորէն դուրս ելելով, ոսկի տապար մը  
տուաւ փայտահատին։

— Ամիկա իմս չէ, ըսաւ փայտահատը, իմս պարզ  
երկաթէ էր։

Այն ատեն պարիկը պուռաւ անոր իր երկաթէ գոր-  
ծիքը, ու ծովուն մէջ անհետացաւ։

Գեղջուկը աւելի եռանդով աշխատեցաւ այն օրը, և  
երբ իրիկունը տուն գարձաւ, եղելութիւնը(6) պատմեց իր  
եղորը Տիրանին որ իրեն պէս փայտահատ էր։

— Ա.զուշ, ըսաւ Տիրան անոր, ինչո՞ւ չառիր ոսկի  
տապարը, հիմակ ա'լ աշխատելու պէտք չէիր ունինար։

Հետեւեալ առոտուն կանուխ Տիրան իր կացինը առաւ  
ծովեղերք գնաց, և տապարը նետեց ծովուն խորը, յետոյ  
սկսաւ լալ պոռալ։

Անոր լացը լսելով, բարի պարիկը դուրս եղաւ ծովէն  
ու հարցուց։

— Ինչո՞ւ կուլաս, ըսէ՛ ինծի, ամէն ցաւիդ կրնամ  
դարման գտնել։

Եւ փայտահատը պատմեց անոր թէ կացինը ձեռքէն  
ինկեր էր։

Պարիկը վայրկեան մը աներեւոյթ եղաւ(7) ալիքնե-  
րուն մէջ, յետոյ նորէն դուրս ելելով, ոսկի տապար մը  
բերաւ անոր։

Տիրան ուրախութեամբ յափշտակեց(8) զայն պարիկի  
ձեռքէն, ու չուտով հեռացաւ ծովեղերքէն։ Բայց ճամ-

բան՝ ոսկի տապարը ձեռքին մէջ հող կտրեցաւ, և փառ  
փառք գետինը թափեցաւ:

Այսպէս պատճուեցաւ խարդախ(9) ու ազահ փայ-  
տահատը:

Մինչեռ հետեւեալ օրը, իր պարկեշտ եղբայրը, կա-  
ցինով ծառը կտրած ատեն, պարկ մը ոսկի գտեր էր հո-  
ղին մէջէն:

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ.** — Շիսակ խօսող եւ պարկեշտ մարդը  
անպատճառ օր մը յաջողութեան կը հասկի, խակ ստախոս  
եւ խարդախ մարդը անպատճառ կը պաժուի:

#### ԲԱՑԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **Փայտահատ.** — Փայտ կոտրող:

(2) **Կացին.** — Փայտ կտրելու գործիք:

(3) **Դարման.** — Դեղ, ճար:

(4) **Հեծկալալ.** — Լալ ողբալ:

(5) **Եղելուրիւնը.** — Պատահածը:

(6) **Աներեւոյք եղաւ.** — Անյայտ եղաւ:

(7) **Յափշակեց.** — Քաշեց առաւ:

(8) **Խարդախ.** — Խարեբայ:

**ՀԱՐՅՈՒՄԵԵՐ.** — Փայտահատը ի՞նչ կ'ընէր: — Ի՞նչ պատա-  
հեցաւ իրեն: — Մարդը ի՞նչ ըրաւ: — Ծովուն մէջէն ՞վ եղաւ: — Ի՞նչ  
հարցուց իրեն. — Փայտահատը ի՞նչ պատասխանեց. — Պարիկը ի՞նչ  
բերաւ փայտահատին: — Փայտահատը առաջ անոր տուած կա-  
ցինը: — Պարիկը ի՞նչ ըրաւ: — Իրիկոնը որո՞ւ պատմեց այս եղե-  
լութիւնը: — Տիգրան ի՞նչ ըրաւ հետեւեալ առտուն: — Պարիկը ե՞րբ  
ոսկի կացինը տուաւ, Տիգրան ի՞նչ ըրաւ զայն. — Ճամբան՝ կացինը  
ի՞նչ եղաւ: — Խոկ պարկեշտ եղբայրը ի՞նչ գտաւ հողին տակէն:

#### 49. ԲԱՐԻ ԶԱԻԱԿ ՄԸ

Օքը շատ տաք էր. դաշտէն կը դառնայի յոգնած  
դաղլրած(1) երբ հօրս հանդիպեցայ որ գիւղ կ'երթար:

— Վահա՞ն, ըստու, մեծ բնուէ մը պիտի աղատես զիս,  
եթէ սա ծրարը գիւղ տանիս. այնչափ տեղ երթալու ուժ  
չունիմ:

Տասերկու տարեկան էի. շատ չէի սիրեր քալել, և  
առառուցնէ ի վեր անօթի ծարաւ աշխատեր էի. գիւղը  
հեռու էր, և ուշ պիտի մնայի ճաշելու:

Մերժումի շարժում մը ընելու վրայ էի, որովհետեւ  
շատ դժուար կտս գար ինձի այնչափ ճամբայ քալել: Եթէ  
մերժէի(2), հայրս ինք պիտի երթար, վասն զի կարեւոր  
բան մըն էր տարուելիք ծրարը, զոր չէր կրնար օտարի  
մը յանձնել(3):

Բան մը կեցուց շարժումն:

— Կը տանիմ, սիրելի՛ հայրիկ, ըսի սրտանց:

— Շնորհակալ եմ, Վահա՞ն, ըստու. կուզէի ձեռ-  
քովս տանիլ, բայց այսօր վիճակս աղէկ չէ:

Մինչև ճամբուն դարձած տեղը հետ քալեց, և ինձմէ  
բամնուած պահուն, ձեռքը թեւիս վրայ զնելով ըստու.  
«Շնորհակալ եմ, տղա՛ս, դուն միշտ բարի զաւակ մը  
եղար ինձի համար:»

Շուտով ծրարը տեղը յանձնեցի և վերադարձայ:

Տանը մօտեցած միջոցիս, խումբ մը գործաւորներ  
տեսայ դրանը քով հաւաքուած(4): Ասոնցմէ մէկը, զիս  
տեսնելով, քովս եկաւ ու լալով ըստու.

«Չեր խեղճ հայրը մնաւաւ տունէն ներս մտած միջո-  
ցին. Ճեղի ուղղած խօսքերը իր վերջին բառերը եղան:»

Այսօր ծերունի եմ, բայց ո՞րչափ երջանիկ կ'զգամ  
ինքդինքս, քանի կը յիշեմ թէ հօրս վերջին խօսքերը եղան  
ինծի ուղղած ոս բառերը. «Դուն միշտ բարի զաւա՛լ մը  
եղար ինծի համար:»

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ . — Սիրեցի՛ ձեր ծնողը. երբեք մի՛  
վշացմեկ զանոնի, որպիս զի զանոնի կորսմակեղե եսիր  
խղճի խայթ չունենաֆ:**

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ

(<sup>1</sup>) Յոզենած դադրած. — Չափազանց յոզնած:

(<sup>2</sup>) Երէ մերժէի. — Եթէ չտանէի:

(<sup>3</sup>) Յանձնել. — Տալ, վատահիւ:

(<sup>4</sup>) Հաւաքօւած. — Ժողվուած:

**ՀԱՅՅՈՒՄՆԵՐ. — Դաշտէն դարձած ատենդ երբ հօրդ հանդիպեցար, ի՞նչ ըստ քեզի. — Ուզեցի՞ր ընդունիլ: — Ի՞նչո՞ւ համար. — Եթէ դուն մերժէիր, հայրդ ի՞նչ պիտի ընէր: — Ի՞նչ պատասխանեցիր: — Ի՞նչ ըստ, եւ ի՞նչ ըրաւ. — Քեզմէ բանուած ատենդ ի՞նչ ըստ վերջին անգամ. — Դարձիդ ի՞նչ պատահեցաւ:**

## 50. ՏՐԴԱՏ ԹԱԳԱԽՈՐ

Տրդատ Հայոց Խոսրով Ա. թագաւորին աղան էր որ  
հօրը մահէն ետքը, թշնամիներուն ձեռքէն աղատելու  
համար Հռոմ տարուեցաւ ուր անցուց իր մանկութիւնը(<sup>1</sup>)  
և պատանեկութիւնը(<sup>2</sup>):

Այնքան անձնուեր(<sup>3</sup>), քաջասիրաւ և ուժեղ էր Տրդատ  
որ ամէնքը կը զարմանային իր վրայ:

Անգամ մը վայրի ցուլի(<sup>4</sup>) մը եղջիւրները մէկ ձեռ-  
քովը բանելով՝ փրցուց, և վիզը ոլորելով՝ սպաննեց զայն:

Ուրիշ անգամ մը, կառարշաւի(<sup>5</sup>) մէջ, իր հակառա-  
կորդը, իրմէ առաջ անցնելու համար, հրեց վար ձգեց  
վիճուքը. Տրդատ հակառակորդին կառքին ետեւէն վազեց  
և այնովէս ուժով բանեց որ ձիերը կեցուց:



Պատերազմի մէջ ալ մեծ քաջութիւններ ըրաւ, և  
այնչափ նշանաւոր եղաւ որ Հռոմայեցուց կայսրը դրկեց  
վիճուքը թշնամի թագաւորի մը հետ մենամարտելու(<sup>6</sup>):

Տրդատ մննամարտեցաւ և յաղթեց, ու իր յաղթութեան փոխարէն՝ Հայաստանի թագաւոր եղաւ:

Այդ միջոցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Քրիստոնէութիւն կը քարոզէր Հայոց մէջ որոնք կռապաշտ էին: Տրդատ որ թշնամի էր քրիստոնէութեան, Ս. Լուսաւորչի դէմ զայրանալով<sup>(7)</sup>, Խոր-Վիրապը<sup>(8)</sup> նետել տուաւ զայն: Լուսաւորիչ երկար տարիներ ասլրեցաւ հոն՝ հայ կնոջ մը օգնութեամբ որ ամէն օր հաց մը կը նետէր Վիրապին մէջ:

Տրդատ թագաւորը չարչարելով սպաննել տուաւ կոյս Հոխիսիմէն և կոյս Գայիանէն իրենց բոլոր ընկերուհիներուն հետ միատեղ, որովհետեւ քրիստոնեայ էին և իրեն կուռքերը պաշտել չէին ուզեր:

Այս չարիքները գործելէ ետքը, Տրդատ խելագարեցաւ<sup>(9)</sup>, և իր պալատն ու ընտանիքը թողած, սկսաւ լեռնէ լեռ թափառիլ<sup>(10)</sup>:

Իր քոյրը, Խոսրովիդուխտ իշխանուհին, զիշեր մը, երազին մէջ հրեշտակ մը տեսաւ որ ըստ իրեն թէ Տրդատ չպիտի բժշկուէր, մինչեւ որ Ս. Գրիգոր Լուսաւորիչը հանէին Խոր-Վիրապէն:

Իշխանուհին անմիջապէս մարդ զրկեց, Ս. Գրիգոր Լուսաւորիչը հանել տուաւ Խոր-Վիրապէն, և թագաւորը բժշկուեցաւ, ու քրիստոնէութիւնը ընդունեցաւ. իրեն հետ բոլոր Հայերն ալ կռապաշտութիւնը թողուցին ու քրիստոնեայ եղան:

○○

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Մանկուրիւն. — Տղայութիւն:

(2) Պատանեկուրիւն. — Տղայութենէն ետքի քանի մը տարիները:

(3) Անձնուէր. — Ուրիշներուն համար ինքինքը մոռցող:

(4) Յուլ. — Կովին արուն:

(5) Առաջաւու. — Տեսակ մը մրցում է. շատ մը կառքեր կը վազնեն, և ով որ առաջ անցնի մրցանակ կ'ստանայ:

(6) Մենամարտիլ. — Երկու հոգի իրարու հետ կռուիլ:

(7) Զայրանալ. — Բարկանալ:

(8) Խոր-Վիրապ. — Խորունկ հոր:

(9) Խելագարեցաւ. — Խենդեցաւ:

(10) Թափառիլ. — Ասդին անդին իինալ:

ՃԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ո՞վ էր Տրդատու — Ո՞ւր անցուց իր մանկութիւնը եւ պատանեկութիւնը. — Ի՞նչպէս տղայ էր Տրդատ. — Ի՞նչ ըրաւ ցոլին, — Կառարշաւլին մէջ ի՞նչ ըրաւ. — Հումայեցւոց կայսրը ինչո՞ւ թագաւոր ըրաւ զինքը. — Տրդատ ինչո՞ւ խորվիրապը նետել տուաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչը. — Ս. Լուսաւորիչ ի՞նչպէս կրցաւ ապրիլ վիրապին մէջ. — Ուրիշ զ՞ո՞վ չարչարեց ու սպաննել տուաւ Տրդատ. — Ետքը ի՞նչ եղաւ Տրդատ. — Ի՞նչպէս բըշկուեցաւ Տրդատ. — Բժշկութենէն ետքը ի՞նչ ըրաւ:

○○

### 51. ԴՐՈՌԱԿԱՆԸ ԵՒ ՇԵՐԱՄԸ

Դպրոցին մէջ մանչ մը փոքրիկ

Շատ կը ձանձրանար.

«Ո՞հ, ա՞լ հերիք, կըսէ, հերիք  
Կարդամ անդադար.


Առառն կ'ելեմ ժամը եօթնին  
Կէս քուն կէս արթուն.

Գիշեր եղած. շուտ անկողին,  
թէե չունիս քուն:

Միակ հաճոյքն էր իր կեանքին  
Շերամ մը միայն,

Որուն համար կուտար հոգին.  
Կը գողար վըրան:

Օր մը, տեսաւ որ կը շինէր  
Բըժոժ մը ձերմակ,



Որուն մէջը պիտի փակուէր  
իրմն պէս մինակ:  
«Ի՞նչ յիմար ես, ըստ անոր,  
Որ ձեռքովդ այդպէս  
Քեզ կը շնես բանա մը կրոր  
Որ մէջը մանես:  
Չե՞ս ահաներ զիս, ի՞նչպէս կուլամ  
Այս նեղ խուցիս<sup>(1)</sup> մէջ,  
Եւ չե՞ս լըսեր ամէն անգամ  
Իմ ողբերս<sup>(2)</sup> անպիրջ<sup>(3)</sup>:»  
Շերամն ըստ հանդարտորէն.  
«Ի՞նչո՞ւ ողբամ լամ.  
Ես կ'աշխատիմ որ քիչ օրէն  
Թիթեռնիկ ըլլամ:»

**ԲԱՐՈՅՑԱԿԱՆ.** — Պետք է օրինակ առնել շերամն որ  
ամստունէց եւ ուրախ արտով կ'աշխատի: Զի դժոհիր իր  
յոզնութենին որովհետեւ իր աշխատութեամբը, որ մը թի-

թեռնիկ պիտի ըլլայ: Միեւնոյն բանը պէտք է լնեն տղաֆ,  
յանի որ իրենց աշխատութեամբը որ մը մարդ պիտի ըլլան:

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(<sup>1</sup>) Խուց. — Փոքրիկ սենեակ:

(<sup>2</sup>) Ողբ. — Լաց և պոռչտուք:

(<sup>3</sup>) Սիլիրջ. — Վերջ չունեցող:

**ՃԱՐՅՈՒՄՆԵՐ.** — Դպրոցականը ի՞նչ կ'ըսէր. — Ի՞նչ էր իր  
կեանքին հաճոյըր — Շերամը ինչո՞ւ բժոժ կը շնէր. — Ի՞նչ ըստ  
դպրոցականը: — Շերամը ի՞նչ պատասխանեց:

## 52. Պ Տ Ո Ւ Կ Ը

Ժամանակաւ շատ ծերուկ մարդ մը կար, որ քալե-  
լու անգամ ուժ չունէր. աչքը գրեթէ չէր տեսներ, ու  
ակույց չունէր, և երբ սեղան նստէր, չկրնալով զգալը  
վիտակ բռնել, ապուրին մէկ մասը սիսոցին<sup>(1)</sup> վրայ կը  
թափէր:

Իր որդին և հարսը վերջապէս քանիցան այս տեսա-  
րանէն, և ծերուկ պապը վառարանին ետին, անկիւն մը  
նստեցուցին, ու կերակուրը հողէ ամանի մը մէջ կու-  
տային իրեն: Խեղճ ծերունին տրամուլթեամբ սեղանին կը  
նայէր, ուր նստած էին իր զաւակները, և արցունք կը  
թափէր:

Եւ պատահեցաւ որ օր մը, իր գոլլոջուն ձեռքե-  
րովը չկրցաւ պտուկը<sup>(2)</sup> բռնել. ամանը վար ինկաւ ու-  
կոտրեցաւ: Դեռատի կինը յանդիմանեց վլնքը խատիւ.  
Խեղճ մարդը չխօսեցաւ, հառաչեց միայն: Այն ատեն,  
քանի մը փարայ տալով, փայտէ պղտիկ պնակ մը գնեցին  
որ անոր մէջէն ուտէ:

Իրիկուն մը , իրենց փոքրիկ զաւակը , որ չորս տարեկան կար , գետինը նստած՝ քանի մը փայտի կտորներ իրար բերելու կ'աշխատէր :



— Այդ ի՞նչ է ըրածդ , հարցուց հայրը :

— Պղտիկ աման մը կը շնիմ կոր , որ հայրիկն ու մայրիկը մէջէն կերակուր ուտեն , երբ ես մեծնամ և անոնք ծերանան :

Այս խօսքերը լսելով , այր և կին իրարու երես նայեցան անխօսուկ . յետոյ սկսան լալ : Ու նորէն ընդունեցան ծերուկ պապը իրենց սեղանը , իրենց հետ կերակուր կերցուցին անոր , և ա՛լ այնուհետեւ երբեք գլխովութիւն չէին ըներ<sup>(3)</sup> , երբ քիչ մը ապուր թափէր սփռոցին վրայ :

**ԲԱՐՈՅԱԿԱՆ .** — Զաւակներուն պարտին և յարգել իրենց ծնողը անոնց ծերութեան մէջ , խնամք տանիդ անոնց եւ պիրոյ վարուիդ հետեւին . մասձեզու են թէ իրենի ալ օր մը ծեր պիտի ըլլան եւ կարօս՝ իրենց զաւակներուն պիրոյ եւ խնամին :

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ


(1) Սփռոց . — Սեղանի ծածկոց :

(2) Պեռուկ . — Հողէ աման :

(3) Դիտողութիւն չէին բներ . — Պակասութիւնը երեսին չէին

[տարի]

ՀԱՐԵՈՒՄՆԵՐ . — Ծերունին ի՞նչ վիճակի մէջ էր : — Կերակուր կերած ատենը ի՞նչ կը պատահէր : — Իր որդին եւ հարսը ի՞նչ ըրին , — Ծերունին զո՞ն մնաց այս կարգադրութենէն : — Օր մը ի՞նչ պատահեցաւ , — Այն ատեն ի՞նչ ըրին : — Փոքրիկ տղեկը իր հօրը եւ մօրը այս ըրածը տեսնելով ի՞նչ ըրաւ : — Երբ հարցուցին թէ ի՞նչ կ'ընէր , ի՞նչ պատասխանեց : — Այն ատեն իր ծնողը ի՞նչ զգացին եւ ի՞նչ ըրին :



### 53. Ա Պ Ա Կ Ի Ն

Հերմինէ և Հարմա քոյր եղբայր են :

Քոյրը մեծ է , տասներեք տարու . եղբայրը փոքր է , տասը տարու :

Միշտ մէկուել կը խաղան պարտէզին մէջ, երբ օդը աղուոր ըլլայ:

Անցեալ օր, օդը անձրեւոս ըլլալուն, չկրցան պարտէզ երթալ. և ստիգուեցան սենեակին մէջ մնալ:

Պատուհանին առջև նստած ախրութեամբ դուրս կը նայէին, խորհելով թէ ինչպէս պիախ անցընէին ամառուան այդ երկար օրը:

Յանկարծ խոշոր ճանձ մը որ սենեակին մէջ կը բըզդար<sup>(1)</sup>, գնաց պատուհանին ապակիին զարնուեցաւ, և գետինը ինկաւ: Պահ մը ետքը նորէն ինքվինքը դաւաւ, թուաւ ու սկսաւ տզզալ, և նորէն գնաց պակիին զարնուեցաւ:

— Ի՞նչ ապուշ կենդանի է սա ճանձը, ըստ Հարմա, չի տեսներ որ ապակի կայ պարտէզին և սենեակին միջև, ու կ'ուզէ դուրս ելլել:

— Ի՞նչպէս տեսնէ, ապակիին ետեւէն պարտէզը ուրոշ<sup>(2)</sup> կ'երեւայ. ապակին այնքան լուսանցիկ<sup>(3)</sup> է որ ճանձը կրնայ խարուիլ:

— Երաւունք ունիս, ըստ Հարմա, աւելի աղէկ կ'ըլլար որ ապակին լուսանցիկ չըլլար:

— Ճանձներուն համար աղէկ կ'ըլլար, Հարմա՛ս, յարեց Հերմինէ ժպտելով, բայց մարդո՞ց համար, ինձի՞ համար, քեզի՞ համար. Ի՞նչ գէշ բան կ'ըլլար եթէ չկարենայինք դուրսը տեսնել:

Բա՛թ, նորէն ճանձը ապակիին զարնուեցաւ և նորէն վար ինկաւ: Պարապ աեղը կ'աշխատիս, չես կրնար ապակին կոտրել: Ի՞նչ աղուոր բան է սա ապակին, և այնչափ աժան է որ ամէն մարդ կրնայ պատուհանին անցընել:

— Սակայն անսպատեհութիւններ<sup>(4)</sup> ալ ունի, պատասխանեց Հարմա, իր տխմար<sup>(5)</sup> խօսքը շտկելու համար, գեռ երէկ ձեռքդ ապակիի կտորէ մը արիւնեցաւ:

— Յանցանքը իմն էր որ ուշաղրութիւն չըրի: Բայց ըսէ՝ նայիմ, դիտե՞ս թէ ապակին ուրկէ յառաջ կու գայ:

— Այո՛, պատասխանեց Հարմա վարանեղով, գետնին տակէն կ'եղիէ, ածուխի պէս:

Քոյրը մկասւ խնդալ, և Հարմա զարմացաւ երբ իմացաւ թէ ապակի շինելու համար պէտք էր աւազը<sup>(6)</sup>, կատիճը և տնկաղը<sup>(7)</sup> մէկուել հալեցնել: Եւ իր պզտիկ մնալը տեսնելով քիչ մը սիրաը կոտրեցաւ:

— Օ՞ն, ըստ քոյրը, քիթդ մի՛ կախեր, և միտքդ պահէ՛ թէ ապակին լուսանցիկ, դիմացկոն և աժան նիւթմըն է: Շատ օգտակար է մեզի, և երախտապարտ պէտք է ըլլանք այն մարդոց որոնք դարեր<sup>(8)</sup> առաջ հնարած<sup>(9)</sup> են գայն:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Թզզալ. — Ճանձին ձայն հանելը:

(2) Որոշ. — Յայտնի:

(3) Լուսանցիկ. — Ան որուն մէջէն լոյսը կ'անցնի:

(4) Սնապանենուրիւն. — Գէշ կողմեր:

(5) Տխմար. — Անիւելը:

(6) Սւազ. — Ծովեզերիի, գետեզերիի հողը (Է՞ս-Է՞ս):

(7) Տնկաղ. — Մովսիրէն եղած տեսակ մը նիւթ (Բօթ-Յա):

(8) Հնարել. — Գտնել:

(9) Պար. — Հարիւր տարի:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.** — Հերմինէ եւ Հարմա ո՞վ են, եւ ի՞նչ կ'ընեն միատեղ երբ օդը աղուոր ըլլայ: — Անցեալ օր երբ անձրեւ եկաւ, ի՞նչ ըրին: — Յանկարծ ի՞նչ պատահեցաւ: — Հարմա մանճին ըրածը տեսնելով ի՞նչ ըստ: — Ի՞նչ պատասխանեց Հերմինէ: — Երբ Հերմինէ հարցուց թէ ապակին ուրկէ յառաջ կոտրայ, ի՞նչ պատասխանեց Հարմա: — ձիշտ էր ըսածը: — Հապա ի՞նչպէս կը շինուի ապակին: — Ի՞նչ տեսակ նիւթ է ապակին:

## 54. ՓՈՍՈՒՌԱՅԻՆ<sup>(1)</sup> ԵՐԳԸ

Լուսիկ, լուսիկ, վա՛ր եկուր,  
Ոստէդ թըռէ՛, վա՛ր եկուր.  
Քեզի բազմոց<sup>(2)</sup> շտկեր եմ.  
Վլրան ծոպ<sup>(3)</sup>, մէջը փետուր<sup>(4)</sup>:  
  
 Լուսիկ, լուսիկ, վա՛ր եկուր,  
Մութ սարէդ շուտ վա՛ր եկուր  
Քեզի պարտէդ տնկեր եմ,  
Մէջը ծաղիկ, երգ ու բոյր<sup>(5)</sup>:  
  
 Լուսիկ, լուսիկ, վա՛ր եկուր,  
Իմ քովիկս ման եկուր<sup>(6)</sup>  
Քեզի պարտ շիներ եմ  
Սիւնով<sup>(7)</sup> բիւրեղ<sup>(8)</sup> ու փրփուր<sup>(9)</sup>:  
  
 Լուսիկ, լուսիկ, վա՛ր եկուր,  
Գլխուս վերև հի՛ո եկուր<sup>(10)</sup>.  
Քեզի սեղան շտկեր եմ  
Մեղրէ խորտիկ<sup>(11)</sup>, վարդէ ջուր:  
  
 Լուսիկ, լուսիկ, վա՛ր եկուր,  
Այս գիշեր մեզ հիւր եկուր.  
Քեզ անկողին շտկեր եմ,  
Ծաղկի թերթով շատ մաքուր:

### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Փոսուռայ. — Փոքրիկ մանճ մը որ զիշերը լոյս կուտայ:  
 (2) Բազմոց. — Նստելու տեղ («ԵՐԵՎԱՆ»):  
 (3) Ծոպ. — Բարակ թելերով շինուած զարդ մը («ԵՐԵՎԱՆ»):  
 (4) Փետուր. — Թուչուններուն վրայի փափուկ մազը («ԵՐԵՎԱՆ»):  
 (5) Բոյր. — Անուշ հոտ:

(6) Ման եկուր. — Պարսէ:

(7) Սիւն. — Շէնքի մը մէջ վերէն վար երկնցած զլանաձեւ փայտ կամ բար:

(8) Թիւրեղ. — Տեսակ մը աղուոր ապակի որով գաւաթ, շիշ կը շինեն («ԵՐԵՎԱՆ»):

(9) Փրփուր. — Ծովուն երեսի ճերմակ ջուրերը երբ փոթորիկ ըլ-լոյ («ԵՐԵՎԱՆ»):

(10) Հիւր եկուր. — Կլոր կլոր դարձիր:

(11) Խորտիկ. — Խորոված:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Մանուկը ի՞նչ կ'ըսէ փոսուռային: — Ինչո՞ւ կուսիկ կ'անուանէ զայն: — Ինչո՞ւ այս ոտանաւորին վրայ երգ զըրուած է: — Երգերը ի՞նչ տարբերութիւն ունին արտասանուելիք ոտանաւորներէն: — Այս երգին եղանակը զիտէ՞ք:

ՅԱԻՆՈՒԱԾ

## ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԵՒ ՏՕՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ

ՄԱՆԿԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՌՈՐԾԻ ԹԻՒՆՆԵՐ

### 1

Խելօք տըղայ մ'եմ պըղտիկ ,  
Դաղրոցիս մէջ մէկ հատիկ .  
Սեւ աչուկներ ունիմ ես  
Որ կը վառին բոցի պէս :

Բայց աչքերէս մի՛ վախնաք ,  
Գառնուկ մ'է սիրոս անապակ ,  
Որ զգացմամբն իր բարի  
Զեղ կը մաղթէ նոր Տարի :

Ես չեմ զիտեր երդ , դաշնակ ,  
Եւ ձայնս ալ չէ ներդաշնակ ,  
Բայց ուղղելովզայն երկինք ,  
Կը մաղթեմ որ շատ ապրինք :

### 2

Աչքերուս բոցն եռանդուն  
Արեւու պէս կը վառի .  
Սիրոս սիրով բարախուն  
Անուշ խունկն է բուրվառի :

Այս խունկն երկինք կը թըռի  
Ինչպէս աղօթք մը երկար ,  
Ինչպէս շունչ մը կիթառի ,  
Մաղթելով կեանք քեղ համար :

### 3

Իմ երազիս մէջ , հրեշտակներ փոքրիկ  
Հարցուցին ինծի . «Կ'ուղե՞ս խաղաղիկ :»  
Լեզու մ'ուղեցի շատ պերճ բառերով ,  
Որ յայտնեմ ձեզի իմ սէրս ու գորով :  
Դպրոցին ինձ ըսին . «Կ'ուղե՞ս մրցանակ ,  
Բարենիշ , գիրքեր , պատիւ , գովասանք :»  
Գրրիչ մ'ուղեցի , գրրիչ անվեհներ ,  
Արտայայտելու ձեզ իմ հոգւոյս սէր :

Անհուն ըղձանքներ անկեղծ , սիրազեղ ,  
Կը լեցուին փոքրիկ սրտիս մէջ անմեղ ,  
Եւ թէովէտ լեզուս շատ դոզդոջ է դեռ ,  
Կը մաղթեմ ձեզի ուրախ տարիներ :

### 4

Թիթեռնիկի պէս զըւարիթ  
Եւ անոր պէս անհանդարտ ,  
Բայց անխօս չեմ անոր պէս .  
Ծիծաղ ու ձայն ունիմ ես :  
Եւ երբ լարած սրտիս թել ,  
Կու գամ կազանդ ձեզ մաղթել ,  
Թըռչնիկ կ'ըլլամ շաղակրատ  
Եւ աղօթքներ կ'ուղղեմ շատ  
Իմ Աստուծոյս բարերար ,  
Որ ձեզի կեանք տայ երկար :

### 5

Բարդ բարդ ձիւներ եթէ զիզուին  
Երկինքին մէջ թանձը ու մըթին ,

Ե՞նչ փոյթ ինծի . սիրտս է պայծառ  
Այս կաղանդի տօնին համար :

Եթէ դուրսը ծաղիկ չըկայ ,  
Բոլոր ծառեր մերկ են հիմայ ,  
Ի՞նչ փոյթ ինծի . սիրտս է դալար  
Այս կաղանդի տօնին համար :

Ու իմ դալար մաքուր որտով ,  
Ուր այնքան սէր կայ և գորով ,  
Զեղ կը մաղթեմ , ո՞վ հայր և մայր ,  
Որ տարիներ ապրիք երկար :

6

Սրեւուն լոյսը չէ այնչափ փայլուն ,  
Որչափ մեր կեանքը զըւարթ և սիրուն ,  
Որքան ձեր սէրը , ձեր խընամքն համակ  
Որով մեր վրբայ միշտ կը գուրգուրաք :  
Այդ գուրգուրանքով , այդ սիրով ջերմիկ  
Մեր մանուկ սիրտեր կ'ըլլան երջանիկ ,  
Եւ իրենց զըգուուս ըզգացմանց խորէն՝  
Զեր կեանքին համար անդուլ կ'աղօթեն :  
Մաղթելով ձեղի բարիքներ բոլոր ,  
Ի՞նչ պէս գուրք կուտաք մեզի ամէն օր :

7

Աղաւնին եմ , ու լեռներու կատարէն  
Իմ շըրթունքներս աւետիս ձեղ կը բերեն  
Թէ նոր Տարին եկաւ զըւարթ ու խընդուն .  
Թող բերկութեամբ լեցուի մեր կեանքն ու մեր տուն :

Շունչի մը պէս ձայնոս թեթև , բայց հըզօր  
Կը մրմբնջէ ձեզ մաղթանքներ նորանոր ,  
Որ երջանիկ ըլլայ ձեր կեանքն յաւիտեան :  
Փափաքն այս է ձեր շատ փոքրիկ առջըկան :

8

Զիւնը ճերմակ , սիրտս ալ ճերմակ ,  
Եւ իղձերս են վարդագոյն .  
Շուրջը ծիծաղ է կեանքս համակ  
Եւ աստղերով փողփողուն :  
Այդ աստղերէն , այդ վարդերէն ,  
Այդ ձիւներէն լուսափառ  
Հիւսուած փունջ մը ձեղ կը բերեն  
Սիրտս ու հոգիս սիրտվառ չ:

9

Եթէ շըրթունքս ըլլար քընար  
Կամ տաւիդ մը քաղցրալար ,  
Պիտի հնչէր երգեր աղուոր  
Աւետելով Տարին նոր ,  
Ու մաղթելով որ շատ ապրիք  
Ուրախ , խաղաղ , երջանիկ ,  
Եւ իմ կեանքս ալ ուհի զըւարթ  
Զեր թեւին տակ խանդակաթ :

10

Լոյս ծիծաղ մը կը ծընի  
Նոր օրուան հետ երկինքին մէջ ծիրանի .  
Ծիածան մը մեր սիրտերուն կը ժալտի  
Երանգներով թարմ վարդի :

Այդ լոյսերով ևանդուն  
Այդ վարդերով, ժըլիաներով փողփոզուն,  
Մեր մանկական հոգիները կը լինան  
Եւ թըռչուններ կը դառնան:

Եւ թըռչունի թեւերով  
Զեզ կը բերեն սէր, գուրգուրանք ու դորով,  
Մաղթերով որ անհոգ, անվիշտ դուք ապրիք  
Շատ տարիներ երջանիկ:

---

11

Եթէ գարունը ըլլար մօտ  
Ծաղիկներով ծիծաղիոտ.  
Սնոնց բայրէն ու թերթերէն  
Կը շինէի ձեզ նարօտ:

Եթէ ձիւնէր ճերմակ ճերմակ  
Երկինքն ի վար շարունակ,  
Զիւնին անբիծ երանդներէն  
Կը շինէի ձեզ պըսակ:

Եթէ երկինք զբւարիթ ըլլար,  
Բիւր շողերէն իր վառ վառ  
Եւ անհամար արևներէն  
Կը շինէի ձեզ բուրվառ:

Երկինք մութէ է. ձիւն չի տեղար.  
Ծաղիկներն են հողմավար.  
Բայց և գարձեալ հոգւոյս խորէն  
Միշտ կ'աղօթեմ ձեզ նամար:

12

Ծաղիկով, բոյրով ձեռքերս են լեցուն.  
Ես ձեր ժպիտն եմ,  
Զեր կեանքին գարուն:  
Ծիծաղով, հուրքով աչքերս են փարփառ.  
Ես ձեր բերկանքն եմ,  
Զեր կեանքին բուրվառ:  
Ճակատս արեւով օծուած է ճերմակ,  
Եւ ես ճաճանչն եմ

Զեր կեանքին համակ:  
Անձըս լեցուն է գորովով անգին,  
Եւ ես ձեր շունչն եմ,  
Յօդը ձեր կեանքին:  
Իղձերով լեցուն իմ մանուկ հոգին՝  
Հաւատքն, յոյն ու սէր՝  
Հօրս ու մայրիկիս:

---

13

Ծաղիկ մըն եմ քաղցրարոյր  
Ոստիս վըրայ, գողգոջուն,  
Միրաըս բաժակ մ'է մաքուր  
Զեր գորովով լիվլեցուն:

Թըռչնիկ մըն եմ նորածին.  
Փեսուրներըս չեն բոււած.  
Թեւերըս նոր կը յածին  
Զեր գորովով զօրացած:

Առուակ մըն եմ ես վճիտ  
Ազրիւրէն նոր բաժնըւած,  
Ծըրփանքներս են մարգարիտ  
Զեր գորովովը հիւսուած:

Ծաղիկներէն հոտաւէտ,  
Մարդարիտէն թամկագին,  
Զիս զրկեցին որ յաւէտ  
Բերկուանքն ըլլամ ձեր կեանքին :

---

14

Շատ մեծյած եմ ևս այս տարի,  
Տաղս իմ ձեռքովս առի զըրի .  
Աղէկ կարդալ սորվեցայ ևս  
Որ երջանիկ ընեմ ըղձեղ :  
Ուստի կու գամ սրտիս խորէն  
Մաղթել ձեզ կեանք զբւարթ ու չէն ,  
Եւ կ'ազօթեմ որ նոր Տարին  
Չեզ բարիքներ բերէ անդին :

---

15

Որչա՞փ կը բաղձամ ըլլալ միծ աղջիկ ,  
Դիանալ շատ բառեր , խօսքեր գեղեցիկ ,  
Որպէս զի լսեմ ամէն օր նորէն .  
«Ըզձեզ կը սիրեմ իմ սրտիս խորէն :»  
Որչա՞փ կը բաղձամ որ ունենամ թեւ ,  
Թոչունի թեւեր արագ ու թեթեւ ,  
Որ թոշիմ թոշիմ ու մաղթանքներս իմ  
Սստուած Պապալին ձեռքովը տանիմ :  
Յետոյ թոչելով վար իջնեմ կրկին ,  
Ու ձեզի բերեմ չնորդն երկինքին ,  
Որ շատ տարիներ ուրախ երջանիկ՝  
Կաղանդի օրուան ցնծութեամբ համնիք :

---

118  
16

ԵՊՀ ԳԻՒԱԴՐԱՆ



SU0025088

# Ա. ԵԱԶԸՆԵԱՆ

ԳՐԱՎԱՃԱՌ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

11, Պազրեմբլար, Սուլքան Համամ

Կ. ՊՈԼԻՍ Ա

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՈՒ ԿԵԴՐՈԽԱՏԵՎԻ

Դ. ԻԱԶԿԱՆՅԻ ԴԱՍԼԵԹԱՑԲՆԵՐՈՒ

ՏԵՂՄ

Դաս

Դրավաճառ-Հրատարակիչ Ա. ԵԱԶԸՆԵԱՆ նորասակ  
ունենալով ամէն բանէ առաջ Հայ տղուն սիրցնել իր  
Մայրենի Եկեղեցին՝ հրատարակութեան համար դիմուած  
Կրօնի Աւանոն գանազան Դասընթացքներուն նախառա-  
տուութիւնը առաջ է Դ. ԻԱԶԿԱՆՅԻ դասադիրքիր ան  
որոնց համար ձևունաս անձերու և պաշտօնական մար-  
միններու քաջալերական դնահասումին այ արժանացած է:

Դ. Խաչիսցի ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՄԸ կը բաղկանաց արևու  
դասընթացքներէ.

1. ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՄԸ. Տարրական, Դ. ապագր.  
1912, էջ 123 . . . . . ; . Դին 41/2

2. ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՄԸ. Միջին, Գ. ապագր., 1914,  
էջ 184 . . . . . ; . Դին 6

3. ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՄԸ. Բարձրագոր., Ա. ապագր.,  
1905, էջ 269 . . . . . ; . Դին 121/2

Գին Յ Դրաւ